Երկու կողմերի որեւէ երկխոսություն, եթե չի արտացոլում հասարակությունների դիրքորոշումը, եթե իրական խնդիրները չեն վերհանվում, եթե այդ երկխոսությունների արդյունքում որեւէ արդյունքի կողմերը չեն հասնում, եթե Ադրբեջանի հռետորաբանությունը չի փոխվում, դա նշանակում է, որ այս ամենը զուտ ցուցադրական պրոցես է:

Կարդացեք՝ էջ 2

Օրեր առաջ նրան այցելած Հայաստանում ՌԴ դեսպան Կոպիրկինը հավելյալ զգուշացում է արել Վահագն Հովակիմյանին, որ չեն ներելու քաղաքական խաղերը, թեպետ Հովակիմյանը երեկ դեսպանի այցի մասին ասաց, որ դա սովորական այց էր, եկել էր ընդամենը ծանոթանալու նախապատրաստական աշխատանքներին:

Կարդացեք՝ էջ 3

Արարատը կարող է լինել Ռուսաստանի տարածքում, Պարսկաստանի տարածքում, Թուրքիայի տարածքում, բայց Արարատը Հայաստանն է, մեր հոգին է, մեր ինքնությունն է, իմաստն է, մեր խորհրդանիշն է, եւ չես կարող հանել իմ միջից, իմ երեխայի միջից: Մինչեւ անգամ Ամերիկայում ապրող հայ երեխան Արարատով է երդվում:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 59 (4194), 11 ապրիլ, շաբաթ, 2026

www.hraparak.am



Ներսում առյուծ կտրած եւ Ռուսաստանի դեմ կատաղի պայքարի դուրս եկած ՀՀ պաշտոնյաները, պարզվում է՝ Ռուսաստանում կատու են դառնում եւ պատրաստ են մկան ծակը հազար թումանով առնել: Փաշինյանի գլխավորած պատվիրակության՝ Մոսկվա ապրիլմեկյան այցի ընթացքում, երբ հայկական եւ ռուսական պատվիրակությունները սպասելիս են եղել ՌԴ նախագահի եւ Փաշինյանի ժամանմանը, ՌԴ արտգործնախարար Լավրովը խայթել է ՀՀ պաշտոնյաներին եւ հեգնախառն հարցրել՝ եկմն ձեր ԵՄ հիբրիդային խմբերը եւ ո՞ւմ դեմ են պայքարում: Ի դեպ, ռեպլիկի մի մասը տեղ է գտել նաեւ ռուսական լրատվամիջոցների ռեպորտաժներում, սակայն հայկական կողմի արձագանքը ներառված չէ: Մեր աղբյուրներից տեղեկացանք, որ Լավրովին ափալ-թափալ տեղից արձագանքել է արտգործնախարար Միրզոյանը, որ շտապել է արդարանալ, թե ինքը տեղյակ չէ, իբր չի էլ հասկանում, թե ինչի մասին է Լավրովը հարցնում: Մինչդեռ հենց Միրզոյանի նամակին ի պատասխան, ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասը հայտարարեց, որ ԵՄ-ն, ընտրություններին ընդառաջ, Հայաստան կուղարկի հիբրիդային արագ արձագանքման խումբ: «Մեր հարեւանության ժողովրդավարական դիմադրողականության աջակցությունը մնում է կարեւոր: Մենք չենք թողնի, որ Հայաստանը միայնակ դիմակայի արտաքին միջամտությանը: Ճնշման տակ գտնվող ժողովրդավարությունները կարող են հույսը դնել Եվրոպայի վրա»,- նշել էր նա:

Ինչպես հայտնի է, Էդմոն Մարուքյանի գլխավորած «Լուսավոր Հայաստան» կուսակցությունն այսօր՝ ապրիլի 11-ին, համագումար էր հրավիրել, որի ժամանակ պետք է հաստատեին նաեւ նախընտրական ցուցակը եւ ներկայացնեին կուսակցության ծրագիրը: Սակայն տեղեկացանք, որ համագումարը հետաձգվել է, տեղի կունենա հաջորդ շաբաթ՝ ապրիլի 18-ին: Հետաձգման պատճառն «Ուժեղ Հայաստան» կուսակցության այսօր հրավիրած համագումարն է: Մարուքյանի թիմում կարծում են, որ համագումարն ու իրենց մասին ինֆորմացիան կկորչեն հանրահավաքի ինֆորմացիոն աղմուկի մեջ: ԼՀԿ-ն հայտարարել է հունիսի 7-ի ընտրություններին մասնակցելու մասին, օրերս գրել էինք, որ կուսակցությունում խորը տարաձայնություններ կան մասնակցել-չմասնակցելու հարցում, ընդ որում՝ կուսակցության ղեկավար կազմում անգամ չկա միասնական դիրքորոշում, սակայն մեր աղբյուրներն ասում են, որ որոշումը թերեւս վերջնական է, եւ հաջորդ շաբաթ կայանալիք համագումարի ժամանակ կհայտարարվի մասնակցելու մասին:

Ոչ մի արժանիք

Ի՞նչ չափանիշների պետք է համապատասխանի երկրի ղեկավարը: Գրագետ՝ տնտեսությունից եւ արտաքին քաղաքականությունից գլուխ հանող, խելացի՝ իրենից խելացի մարդկանց կարծիքը լսող, ժուժկալ՝ փողի նկատմամբ թուլություն չունեցող, քաղաքավարի՝ թե՛ ենթակաների, թե՛ արտաքին գործընկերների հետ հարգալից շփվող, զուսպ՝ սեփական խոսքի արժեքը բարձր գնահատող, ժողովրդավար՝ ինստիտուտների նկատմամբ հարգանք ունեցող, արդարամիտ՝ հակառակորդների դեմ ազնիվ պայքարող, հոգատար՝ սոցիալապես անապահով խավերի նկատմամբ կարեկցանք ունեցող, հայրենասեր՝ ազգային արժեքները կարեւորող, պետականամետ՝ պետության շահը սեփականից վեր դասող: Այս չափանիշներից քանիսի՞ն է համապատասխանում գործող վարչապետը: «Մի քիչ իրեն գժի տեղ դնելով» շփվել է արտաքին գործընկերների հետ: Եվրոպական շուկան չմտած՝ նեղացնում է ԵԱՏՄ գործընկերներին: Կառավարությունում չկա մի մարդ, որն իր պաշտոնին հարիր կրթություն կամ փորձ ունենա: Սեփական թիմին եւ իրեն աստղաբաշխական պարգեւավճարներ է բաժանում: Ենթականերին նվաստացնում է «վոթսափյան» քաղաքականությամբ, այլ պետությունների ղեկավարներին շշպռում իր «ազատ սոցիալական ցանցերով»: Դատարանները շրջափակելու կոչերով եւ սահմանադրություն փոխելով՝ ոչնչացրել է իրավապահ համակարգը: Ընդդիմախոսներին ամիսներով կալանքի տակ է պահում եւ հեգնում, թե «ինտերնետ ունեք, մի բան ասեք»: Աղքատներին ասում է՝ աղքատությունը ձեր գլխում է, թոշակառուի՝ 10 հազար դրամ ծախսելու ունակության վրա է կասկածում: Պատմական արդարությունը՝ անիմաստ համարում, իսկ պետության շահը 600 դոլարանոց գազի եւ առեւտրի բացակայության մեջ է տեսնում:

Քննչական կոմիտեն փետրվարի 14-ին որոշում էր կայացրել Ամենայն հայոց կաթողիկոսի նկատմամբ խափանման միջոց կիրառել բացակայելու արգելքը: Այդ արգելքի եւ Վրաստան մեկնելու ժամանակավոր թույլտվությունը քննիչի կողմից մերժելու պատճառով Ամենայն հայոց կաթողիկոսը չկարողացավ մասնակցել Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլյա Երկրորդի հուղարկավորության արարողությանը: Քննիչի այս որոշումը բողոքարկվել էր վերադաս դատախազին: ՀՀ գլխավոր դատախազությունը որոշում էր կայացրել բողոքը մերժելու մասին: Դատախազի մերժումից հետո բողոք էր ներկայացվել դատարան: Երեկ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարանի դատավոր Անի Դանիելյանը որոշում է կայացրել Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտպանի բողոքը բավարարելու մասին: Դատարանի որոշման հիման վրա Ամենայն հայոց կաթողիկոսի նկատմամբ կիրառված խափանման միջոցը ենթակա է վերացման:

ԱՐԳԵԼՔԸ ՉԻ ՎԵՐԱՑՎԵԼ

Նախօրեին Երեւանի առաջին ատյանի դատարանը մերժել է «18 արդարների» կամ Սրբազան պայքարի գործով անցնող Արցախի պատգամավոր Դավիթ Գալստյանի դիմումը՝ ելքի սահմանափակումը ՍԷԿՏ-ից՝ Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից վերացնելու վերաբերյալ: Նշենք, որ նրա նկատմամբ 2025 թվականի նոյեմբերի 20-ից կիրառվել էին վարչական հսկողություն եւ բացակայելու արգելք: Դատարանին հասցեագրված միջնորդագրում նշվել է, որ Գալստյանը հրավեր ունի «Եվրասիա» ՀԿ-ի կողմից եւ պետք է ապրիլի 24-25-ը մասնակցի կազմակերպության ծրագրած միջոցառմանը: Բացի այդ՝ դուստրը սովորում է ՌԴ-ում, եւ տեւական ժամանակ է՝ նրան չի տեսել: Սակայն դատարանը մերժել է՝ համարելով, որ նպատակահարմար չի գտնում բավարարել միջնորդությունը: «Եվրասիա» ՀԿ-ն, հիշեցնենք, Արցախի հանձնումից հետո Հայաստան բռնի տեղահանված արցախցիներին մշտական օգնություն է ցուցաբերել եւ շարունակում է ծրագիրը:

ՇՈՒԿԱ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ 50 ՏՈԿՈՍՈՎ ԹԱՆԿԱՑԵԼ Է. ԻՆՉ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՆԱՆՔ

Զրդյոճք ներկայիս աշխարհաքաղաքական լարված իրավիճակը կանդրադառնա անշարժ գույքի շուկայի վրա: Իրանական պատերազմի առաջին օրվանից խոսակցություններ են տարածվում, թե տների գները Հայաստանում բարձրանում են, որ 80 մլն բնակչություն ունեցող Իրանից, նաեւ՝ Լիբանանից, փախստականների հոսք է սպասվում, ինչի հետեւանքով կավելանա անշարժ գույքի պահանջարկը: Վիճակագրությունը եւս հաստատում է այդ միտումը: Ըստ այդմ, դեռ պատերազմից առաջ, տարեսկզբից անշարժ գույքի հայաստանյան շուկայում օտարերկրացիների ակտիվություն էր նկատվում: Հունվարին օտարերկրացիների իրականացրած գործարքները կազմել են 126 միավոր, ինչը նախորդ տարվա համեմատ 9 տոկոսով ավելի է: Մեր անշարժ գույքի հիմնական գնորդները ռուսներն են, որոնք 126-ից 109 գործարք են իրականացրել, երկրորդ տեղում ԱՄՆ քաղաքացիներն են՝ 9 գործարք:

Իրանցիների ակտիվություն առայժմ չի նկատվել: Ըստ անշարժ գույքի «Կալիբրի» գործակալության տնօրեն **Ռուստամ Գրիգորյանի**, գների բարձրացում շուկայում նկատվում է, սակայն չի կարելի միանշանակ ասել, որ դա պայմանավորված է Իրանի շուրջ պատերազմի հետեւանքներով: «Այլ գործոններ էլ կան, օրինակ, բնականոն պահանջարկը: Օտարերկրացիների գնումներն ընդհանուր գործարքներում այնքան էլ մեծ չեն, 3-4 տոկոս են կազմում»,- ասում է նա:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Շինարարության տեմպերն ավելացել են, ըստ փետրվարի պաշտոնական վիճակագրության, 20,5 տոկոսով շինարարության ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է, բայց պահանջարկի այս ավելացումն ինչո՞ւ չի անդրադառնում գների վրա:

Ըստ «Կալիբրիի» տնօրենի, շինարարության ծավալների աճը չի անդրադարձել երեւանյան գների վրա: «Եկամտային հարկը Երեւանից դուրս եկավ, այդ աճը, հավանաբար, մարզերի հաշվին է: Կենտրոնական բանկը եւ Կադաստրի կոմիտեն հրապարակել են իրենց եռամսյա վերլուծությունները, եւ, ըստ դրանց, մոտավորապես 5 տոկոսի աճ կա անշարժ գույքի շուկայում: Գների այս աճն արդեն զգացվում է»:

Անշարժ գույքի գծով փորձագետ **Կարապետ Հովհաննիսյանը** հակառակն է պնդում: Ըստ նրա, անշարժ գույքի շուկայում թանկացումներն արհեստական են, բազմաթիվ նորակառույց գույքեր չեն վաճառվում: «Շատ վաճառողներ այս պահին գներն իջեցնում են ու, միեւնույն է, գնորդ չեն էլ գտնում: Իսկ խաղացող վերավաճառողներն իշխանությունների ասեղն են թելում: Իշխանությունները շահագրգիռ են, որ գույքի գները թանկանան, ու ամեն բան անում են դրա համար, ինչ ծրագիր ասես, որ չեն հորինում: Իրականում, բանկերում վարկ վերցնող չկա, եւ շատ-շատ տխուր վիճակ է»,- ասում է նա: Հիմնական խաղացողների թվում նա նաեւ իշխանությանն է հաշվում: «Շուկայի հիմնական մասնակիցները՝ իշխանություններ, կառուցապատողներ, բանկեր, վերավաճառողներ, շահագրգռված են, որ անշարժ գույքը թանկանա, որպեսզի նորակառույց անշարժ գույքը չլճանա, պետությունն ընտրություններից առաջ տնտեսական ցնցումներ չունենա, սրան գումարած՝ ՀՆԱ-ի աճի հաշվին անընդհատ պարտք է բերում, որպեսզի բանկերը չգնան սնանկության»:

Գործոններից մեկն էլ ագահությունն է: «Դա մարդկային բնույթն է»:

ՌԴ հնարավոր տնտեսական սահմանափակումներն ինչպե՞ս կանդրադառնան անշարժ գույքի գների վրա, հնարավո՞ր է, որ կտրուկ փոփոխություններ լինեն, մարդիկ բռնեն արտագաղթի ճամփան, ու գույքն էժանանա:

«Դրա տնտեսական հետեւանքների պատճառով էլ ավելի վատ կլինի, քան եթե հանգիստ ու բնականոն թողնեն շուկան: Անընդհատ մարդկանց մի հույս տալիս են: Թրիփփի մասին են խոսում, թե Հայաստանն ավելի գրավիչ երկիր է դառնալու, Իրանից 2 մլն փախստականների մասին են պատմում: Հիմա էլ, թե՝ ՌԴ-ից հայերին կքշեն»:

Սրանք, ըստ փորձագետի, հեքիաթներ են: «Շատ կասկածում եմ, որ Թրիփփը կլինի, Իրանից փախստականը չեղավ, ՌԴ-ից էլ հայերին չեն արտաքսի, բայց եթե հայերին արտաքսեն, այդ հայերը՝ ամեն մեկը 4-5 բնակարան ունի գնած նորակառույցներում, մի մասն էլ տարաժամկետ վճարում են: Իսկ եթե Ռուսաստանից գումար այլեւս չուղարկվի, վճարումները կդառնան հարցական, թե՛ այդ գույքերի մի մասը կմտնի վաճառքի շուկա, թե՛ իրենց պահած ընտանիքների գումարը կկտրվի»,- նկատեց փորձագետը:

Նիկոլ Փաշինյանի շնորհիվ 15 հազար դրամ է աշխատել

Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի ներկուսակցական, իրականում՝ նախընտրական այցերը մարզերի հասարակ բնակիչների մեջ այնքան էլ հետաքրքրություն չեն առաջացնում, ինչպես 2018 եւ 2021 թվականների այցերը: Մարզերում Փաշինյանի հետ հանդիպածների, նրա հետ լուսանկարվածների մեջ եղել են տարբեր մակարդակի մարդիկ: Նոյեմբերյան քաղաքում պատմում են, որ Փաշինյանի եւ բարձրաստիճան ՔՊ-ականների վերջին այցի ժամանակ Նոյեմբերյանի կենտրոնում Փաշինյանին ջերմորեն բարեւել, նրա հետ լուսանկարվել է մտավոր խնդիրներ, նաեւ խոսելու դժվարություն ունեցող նոյեմբերյանցի երիտասարդ Արմանը, որին Աման են ասում: Նոյեմբերյանցիները պատմում են, որ Փաշինյանին ուղեկցողները, տեսնելով Արմանի վիճակը, նրան գումար են տվել, որ հեռանա, չնկարահանվի Փաշինյանի եւ բարձրաստիճան ՔՊ-ականների հետ: Նոյեմբերյանի գործարարներից մեկն էլ, որը քննադատական, բացասական վերաբերմունք ունի Փաշինյանի ու նրա իշխանության հանդեպ, ինքն էլ է Արմանին փող տվել, որ նա վերադառնա, նորից միանա Փաշինյանի ու ՔՊ-ի խմբին: Այդպես Արմանը մի քանի անգամ մաքոքային երթ է արել Նիկոլ Փաշինյանի խմբի եւ այդ գործարարի մոտ ու ամեն անգամ կողմերից փող ստացել: Արմանն ուրախ ասել է, որ ինքն այդ օրը 15 հազար դրամ է ստացել 2 կողմից:

ԵԹԵ ԱԴՐԲԵՋԱՆՆ ԻՐ ՀՈՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՓՈԽՈՒՄ, Ո՞ՐՆ Է ԱՅՍ ԱՅՑԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Նիկոլ Փաշինյանի աջակիցներից կազմված հայտնի քաղհասարակության ներկայացուցիչները ժամանել են Ադրբեջան. հայտնում են Ադրբեջանի ԶԼՄ-ները:

«2026 թվականի ապրիլի 10-12-ը Ադրբեջանում կկայանա Ադրբեջանի եւ Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հաջորդ երկկողմանի կլոր սեղանի քննարկումը՝ «Խաղաղության կամուրջ» նախաձեռնության շրջանակներում:

«Խաղաղության կամուրջ» նախաձեռնությունը շարունակում է խթանել երկխոսությունը եւ անմիջական փոխազդեցությունը Ադրբեջանի եւ Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջեւ: Ըստ APA-ի, այս անգամ հայկական պատվիրակությունն Ադրբեջան է ժամանել ցամաքային սահմանով, հատել է սահմանազատված հատվածը եւ անցել սահմանային եւ անձնագրային վերահսկողության բոլոր համապատասխան ընթացակարգերը»,- գրում է ադրբեջանական ԱՊԱ-ն:

Ադրբեջանագետ **Անժելա Էլիբեգովան**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով թեմայի մասին, նկատում է. «Երկու կողմերի որեւէ երկխոսություն, եթե չի արտացոլում հասարակությունների դիրքորոշումը, եթե իրական խնդիրները չեն վերհանվում, եթե այդ երկխոսությունների արդյունքում որեւէ արդյունքի կողմերը չեն հասնում, եթե Ադրբեջանի հռետորաբանությունը չի փոխվում, ապա դա նշանակում է, որ այս ամենը զուտ ցուցադրական պրոցես է, որովհետեւ այդ հանդիպումներին մենք տեսնում ենք բացառապես իշխանամետ եւ իշխանությունների կողմից վերահսկվող շրջանակների, որոնք անհարմար հարցեր երբեք չեն հնչեցնի եւ, առհասարակ, չեն բարձրաձայնի այն հարցերը, որոնք իսկապես հետաքրքրում են մեր հանրությանը: Երկու կողմից էլ խաղաղության օրակարգը իշխանություններն իրենց «մոնոպոլիայի» տակ են վերցրել եւ տպավորություն են ուզում ստեղծել, թե իբրեւ երկու կողմերի երկխոսությունը եւ խաղաղության օրակարգը միայն իրենք կարող են ապահովել եւ, առհասարակ, խոսել խաղաղության մասին: Ինչ վերաբերում է այս հանդիպումներին, ապա դրանք անարդյունավետ են: Երբ հայկական կողմի ներկայացուցիչներին հարց են տալիս, թե ինչու չի փոխվում Ադրբեջանի հռետորաբանությունը, նրանք պատասխանում են, որ ցանկանում են ընդհանրություններ գտնել, այլ ոչ թե հակասություններ, բայց ի՞նչ անկեղծ երկխոսություն կարող է լինել մի պետության հետ, որը զավթողական քաղաքականություն է վարում քո դեմ: Առհասարակ, ինչի՞ մասին են այդ հանդիպումները: Բուռն գործունեության իմիտացիա են ստեղծում, որը ո՛չ խաղաղության մասին է, ո՛չ էլ հաշտության: Ադրբեջանական կողմը խնդիր ունի՝ արտաքին աշխարհին ցույց տալու, որ պատրաստ են երկխոսություն սկսել Հայաստանի հետ, որ, տեսեք-տեսեք՝ մենք փորձում ենք հայերի հետ լեզու գտնել, բայց ամեն անգամ ադրբեջանական կողմը հարձակում է գործում եւ արդարանում, որ հայերն էին մեղավոր»:

Իրավապաշտպան, քաղաքական գործիչ **Նինա Կարապետյանցն** էլ, խոսելով թեմայի մասին, ասում է. «Մի կողմից, անշուշտ, պետք է լինեն շփումներ, այդ պատճառով եղել են ժամանակներ, որ լրագրողներ են եկել ու գնացել Ադրբեջան, հասարակական, քաղաքական գործիչներ են տարբեր վայրերում հանդիպումներ ունեցել եւ այլն: Դա ինքնին ծայրահեղ բան չէ, սակայն այն, որ այս շփումների արդյունքում որեւիցե էական փոփոխություն չի նկատվում, ինձ հատկապես դա է անհանգստացնում: Օրինակ՝ Ադրբեջանի հռետորաբանության մեջ ոչ մի էական փոփոխություն չկա: Մենք շարունակում ենք լսել, որ Հայաստանն «Արեւմտյան Ադրբեջան» է եւ այլ տարբեր սպառնալիքներ: Չգիտեմ՝ ինչքանո՞վ է տրամաբանական այս շփումներն արդյունավետ համարելը: Ամեն բան կախված է նրանից, թե ինչ է մտածում դիմացինդ, ինչպես է մտածում: Արդյո՞ք նրանք եւս ժողովրդավարության կրող են, թե՞ ոչ: Ըստ իս, Ադրբեջանն իր հայատյաց հռետորաբանությունը որեւէ կերպ չի փոխում: Եթե Ադրբեջանն իր հռետորաբանությունը չի փոխում, ո՞րն է այս այցերի իմաստը: Վստահ չեմ, որ հայկական որեւէ շահ ներկայացվում է Բաքվում: Այս մարդիկ ուղղակի Փաշինյանի թիմակիցներն են, որոնց չի կարելի անվանել քաղհասարակություն: Նրանք ներկայանում են որպես անկախ փորձագետներ, բայց իրականում Փաշինյանի թիմակիցներն են»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՔՊ-ՈՒՄ ԾԱՆՐ ԵՆ ՏԱՐԵԼ ՊՈՒՏԻՆԻ ԿՇՏԱՄԲԱՆՔԸ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Նիկոլ Փաշինյանին հրապարակային կշտամբելը ՔՊ-ում ծանր են տարել, ինքը՝ Փաշինյանն էլ, Մոսկվայից ապրիլմեկյան հանդիպումից վերադառնալուց հետո ավելի է կոշտացրել քաղաքական հակառակորդների եւ հատկապես Սամվել Կարապետյանի նկատմամբ հռետորաբանությունը, մինչեւ անգամ խոսեց Կարապետյանի՝ «բոմժ» դառնալու մասին:

Հիշեցնենք, որ Պուտինը Փաշինյանին զգուշացրել-կշտամբել էր, թե Հայաստանում ռուսական անձնագրով անձը քաղաքականությամբ զբաղվելու փորձի համար գտնվում է անազատության մեջ: «Դա ձեր որոշումն է, մենք չենք խառնվում: Բայց կուզեինք, որ նրանք կարողանային մասնակցել այդ ներքաղաքական աշխատանքին»,- հավելելով, որ Մոսկվան մշտապես առաջնորդվելու է հայ ժողովրդի շահերով:

Չնայած Փաշինյանը տեղում Պուտինին պատասխանեց, որ մեր օրենսդրությամբ ՀՀ ընտրություններին կարող են մասնակցել միայն այն մարդիկ, ովքեր բացառապես հայկական անձնագիր ունեն, իսկ ռուսական անձնագիր ունեցողները չեն կարող ո՛չ պատգամավորի, ո՛չ էլ վարչապետի թեկնածու լինել, այդուհանդերձ, նրա թիմակիցները շարունակում են կռվել Կարապետյանի թիմակիցների հայտարարությունների հետ, եւ երեկ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանին խորհրդարանում պատին էին դեմ տվել, թե ինչու քայլեր չի ձեռնարկում ժողովրդին «մոլորեցնող» ուժերի հարցում: Հովակիմյանը պետահրավական հանձնաժողով էր գնացել՝ ԿԸՀ-ի 2024-2025 թթ. գործունեության մասին հաղորդումը ներկայացնելու:

ՔՊ-ական **Լիլիթ Մինասյանը**, դիցուք, թաքնվելով ընդդիմադիր ուժերի թիկունքում, ԿԸՀ նախագահից հետաքրքրվեց՝ ինչ ընթացակարգեր են գործում կուսակցությունների գրանցումը մերժելու համար: **Վահագն Հովակիմյանը**, ի դեպ, ակնհայտորեն, չէր ցանկանում տրվել երբեմնի թիմակիցների սադրանքներին, որոշ տեղեկություններով՝ օրեր առաջ նրան այցելած Հայաստանում ՌԴ դեսպան Կոպիրկինը հավելյալ զգուշացում է արել Վահագն Հովակիմյանին, որ չեն ներելու քաղաքական խաղերը, թեպետ Հովակիմյանը երեկ դեսպանի այցի մասին ասաց, որ դա սովորական այց էր, եկել էր ընդամենը ծանոթանալու նախապատրաստական աշխատանքներին:

Ինչեւէ, Լիլիթ Մինասյանի հարցին ի պատասխան, Հովակիմյանն ասաց. «Մեր Ընտրական օրենսգիրքն այնքան ազատական է, որ քաղաքական ուժը, որպեսզի չգրանցվի, փաստաթղթերը պետք է միտումնավոր չգրանցի, հակառակ դեպքում, եթե փաստաթղթերը թերի է ներկայացնում, ԸՕ-ն պահանջում է, որ տվյալ քաղաքական ուժին տանք մինչեւ 48 ժամ ժամանակ՝ թերությունները շտկելու համար»: Պետահրավական հանձնաժողովի անդամ չհանդիսացող Բաբկեն Թունյանն էր անգամ եկել քննարկմանը եւ կրկին հետաքրքրվում էր Կարապետյանի թիմի գործունեությամբ: Նախ փորձեց հասկանալ՝ 2021-ին արտերկրից որքան մարդ է եկել եւ մասնակցել ընտրություններին, սակայն Հովակիմյանը նրան էլ ցրեց, թե դա այլ մարմիններից է պետք ճշտել, ապա տրտնջաց, թե որոշ ընդդիմադիրներ մոլորեցնում են ժողովրդին, խաբում, թե այսինչ մարդն է լինելու վարչապետի թեկնածուն, այն դեպքում, երբ տվյալ մարդը չի համապատասխանում սահմանադրական պահանջներին: Նա պահանջում էր ԿԸՀ-ի ղեկավարից քայլեր ձեռնարկել ժողովրդին մոլորեցնող ուժերի նկատմամբ: Վահագն Հովակիմյանը, մինչդեռ, հիշեցրեց, որ Հայաստանում խոսքի ազատություն է, ով ինչ ուզում է, կարող է հայտարարել. «Քաղաքական գործիչներն ազատ են, ինչ կուզեն, կհայտարարեն, մեր սահմանադրությունը հստակ է ամրագրում՝ ով կարող է լինել պատգամավոր, ով՝ կառավարության անդամ, մնացածը՝ մարդիկ ազատ են, ոնց ցանկանում են, այդպես էլ հայտարարում են»: ՔՊ խմբակին միացավ նաեւ երբեմնի ընդդիմադիր **Գեղամ Նազարյանը**, որին ակնհայտ նյարդայնացնում էին Վահագն Հովակիմյանի անատամ պատասխանները: Դա նկատել էին նաեւ նիստի մնացած մասնակիցները. նիստը վարող Արուսյակ Զուլհակյանը տեղից ռեպլիկ արեց, նոր խոսքը փոխանցեց Նազարյանին. «Ես զգում էի, որ պոռթկում եք տեղից, հիմա կարող եք Ձեր պոռթկումն արտահայտել»,- ասաց նա: Նազարյանը յոթ հարց ուներ, յոթն էլ՝ ընդդիմության դեմ:

44-օրյա պատերազմում զոհված Աբգար Նազարյանի հոր համար, դիցուք, տարակուսելի է՝ Հայաստանից դուրս ապրող քաղաքացին ինչու պետք է որոշի՝ ինքը ոնց ապրի: Տեղեկություններ կան, որ մեր հայրենակիցները Ռուսաստանից մտադիր են գալ եւ Փաշինյանի դեմ քվեարկություն իրականացնել:

Ապա երկրորդեց Բաբկեն Թունյանին եւ ակնարկելով Սամվել Կարապետյանին ու նրա թիմին, հարցրեց՝ նորմա՞լ է, որ կարող են խաբել եւ ասել՝ ընտրություններից հետո, դիցուք, վարչապետը պետք է լինի կոկորդիլոս Գենան:

Շարունակեց ընդդիմության դեմ արշավը եւ հարցրեց՝ ի՞նչ իմաստ ունի ընտրարշավի ժամկետ սահմանելը, երբ բոլորն արդեն սկսել են դա վաղուց անել՝ «ուժեղ տղաները, ակտիվ տղաները»: Եվ, հավանաբար, նկատի ունենալով «Ուժեղ Հայաստան»-ի ցուցակում հայտնված Էդգար Ղազարյանին, նեղսրտեց՝ ինչո՞ւ պիտի պատգամավորներին ծաղրող մարդը գրանցվի ցուցակում: Նազարյանը թերեւս ամենազիայով է տառապում եւ մոռացել էր, որ քաղաքական գործիչներին ամենաշատը ծաղրող մարդը Նիկոլ Փաշինյանն է: Վահագն Հովակիմյանը Նազարյանի սպասումներն էլ չարդարացրեց. «Եթե կոկորդիլոս Գենան լինի ՀՀ քաղաքացի, որի 25 տարին լրացել է, ապա կարող է»:

Այսպիսով, չնայած ՌԴ-ից ստացած կոշտ նախազգուշացումներին, իշխող խմբակը շարունակում է նույն ոճով գործել, մեր աղբյուրներն ասում են, որ Փաշինյանը ոչ մի կերպ չի հրաժարվում մոլդովական սցենարից, սակայն այլ մարտավարություն են որդեգրել եւ դա չեն անելու իրենց ձեռամբ, այլ իրականացնելու են իրենց գրպանային ՀԿ-ների միջոցով: Վերջիններն արդեն հանձնարարություն են ստացել՝ ուշի-ուշով հետեւել ընդդիմադիրների ընտրարշավին եւ քարոզչության խախտման դեպքեր արձանագրել, բողոքներ հասցեագրել ԿԸՀ-ին ու հետամուտ լինել, որ այդ հիմքով կասեցնեն ուժերի գրանցումը:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՅՍ ԱՆԳԱՄ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՔՐԵԱՕԼԻԳԱՐԽԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՏԵՂ ՉԵՆ ԳՏԵԼ

Քաղաքական վերադասավորումները մտնում են կուլմինացիոն փուլ, գրեթե բոլոր խոշոր ուժերի ընտրական ցուցակները եւ թեկնածուների անունները հայտնի են: Հրապարակված անունները շատերին գրավել են, սակայն հնչում են նաեւ տեսակետներ, որ հատկապես ընդդիմադիր ուժերն այնքան էլ բծախնդրորեն չեն մոտեցել իրենց թեկնածուների ընտրությանը:

Քաղտեխնոլոգ **Արմեն Բադալյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով թեմայի մասին, ընդգծում է. «Օրինակ, վերցնենք «Քաղպայմանագիր» կուսակցությանը, հասկանալի է, որ այդ կուսակցության ցուցակում տեղ են գտել այն գործիչները, ովքեր իշխող քաղաքական ուժի ղեկավարի մոտ ունեն վստահություն, ի դեպ, այնպես չէ, որ ընդդիմության մոտ ցուցակներն այլ տրամաբանությամբ են ընտրվել, այստեղ էլ հիմնականում ներառված են այն անձանց անունները, ովքեր վստահություն ունեն թիմի ղեկավարների կողմից, այնպես որ՝ լայն ժողովրդավարության սկզբունքով ձեւավորված թիմեր դժվար է գտնել այս ընտրություններում: Հիմնական ազդեցիկ ուժերը ՔՊ-ն, ԲՀԿ-ն, «Ուժեղ Հայաստանն» ու «Հայաստան» դաշինքն են, եւ նրանք՝ բոլորն էլ, լիդերային բնույթի քաղաքական միավորներ են՝ կուսակցություններ եւ դաշինքներ, իսկ լիդերային բնույթ ունենալը նշանակում է, որ այդտեղ լիդերի, քաղաքական ուժի ղեկավարի ձայնը վճռորոշ է, եւ թեկնածուներն ընտրվել են բացառապես լիդերի նախընտրությամբ: Ներքին փրայմերիզներ մենք չենք տեսել, իբրեւ ՔՊ-ն դա արեց, սակայն մենք հասկացանք, որ իրականում ոչ մի փրայմերիզ էլ չեղավ, այն անգամ չի կարելի անվանել ձեւական փրայմերիզ, էլ ուր մնաց՝ փրայմերիզ: Հիմնական ցուցակները ձեւավորվել են ղեկավարների քմահաճույքներով: «Քաղպայմանագրի» ցուցակը փորձություն անցած ցուցակ է, այնտեղ ներառված են անձինք, ովքեր անգամ 2017 թվականից հավատարմության երդում են տվել իրենց ղեկավարին եւ աչքի են ընկել իրենց հավատարմությամբ:

«Հայաստան» դաշինքում եղան որոշակի փոփոխություններ, խմբակցության ղեկավարն է հեռանում, նախկին ՏԿԵ նախարարը եւ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչը: Առաջ նրանց հետ էր նաեւ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը, սակայն նրան փոխարինեց այժմ Էջմիածնի քաղաքապետի թեկնածու Սեւակ Խաչատրյանը, որը զբաղեցնում է չորրորդ համարը: Սա էլ լրիվ քաղաքական ցուցակ է:

ԲՀԿ-ում եւս քաղաքական ցուցակ է ձեւավորվել՝ ցուցակում բավականին ազդեցիկ եւ անցողիկ դեր ունի «Մայր Հայաստան»-ը, ինչպես նաեւ՝ ԲՀԿ ղեկավար գործիչները:

«Ուժեղ Հայաստան»-ին կարող ենք որոշակի վերապահումներ անել: Այստեղ հայտնվեցին գործիչներ, որոնք ոչ մի առնչություն չունեն այդ ուժի հետ, սակայն դա վերաբերում է մի քանիսին, մնացյալների մասին ոչինչ ասել չեմ կարող, քանի որ նրանցից շատերը, մեծ հաշվով, երբեք աչքի չեն ընկել: Այնտեղ կան նախկին լրագրողներ եւ այլն, սակայն նրանց մեծ մասի մասին չեմ կարող հստակ ոչինչ ասել, քանի որ երբեք ակտիվություն չեն ցուցաբերել: Ինչ վերաբերում է մյուս քաղաքական ուժերին, ապա նրանց ցուցակների մասին անիմաստ է խոսելը, քանի որ միավորվում են ու բաժանվում:

ԱԺԲ-ն եւ ՀԱԿ-ը, ինչպես նաեւ այլ մի քանի ուժեր անգամ իրենց ցուցակները չեն ներկայացրել դեռեւս, քանի որ, օրինակ, ՀԱԿ-ը չի կարող անցողիկ շեմը հաղթահարել, իսկ ԱԺԲ-ն գրագետ քարոզարշավի պարագայում ունի շանսեր: Միակ դրական բանը, որը տարբերվում է նախկին ընտրություններից, այն է, որ այս անգամ ցուցակներում խոշոր գործարարները՝ քրեաօլիգարխիկ համակարգի ներկայացուցիչները, տեղ չեն գտել: Համենայնդեպս, չորս հիմնական ուժերի ցուցակներում այդպիսիք չկան»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ «ՀԶԲՈԼԼԱՀԻ» ԱՆԴԱՄ Է

*«Հրապարակի» զրուցակիցը Լիբանանի «Զարթոնք» օրաթերթի խմբագիր **Սեւակ Հակոբյանն** է:*

- Վերջին մի քանի օրում Իսրայելն աննախադեպ հարվածներ է հասցնում Բեյրութին, այլ շրջաններին, զոհվել են հարյուրավոր անմեղ մարդիկ: Ապրիլի 9-ին էլ Լիբանանում ազգային սգո օր էր: Ինչպիսին է իրավիճակը հիմա, արդյո՞ք հայեր չեն տուժել ավիահարվածներից:

- Ափսոս, որ Լիբանանի դեմ իսրայելական ոտնձգություններն ու մարդկության դեմ կատարված ոճիրները վերջ չունեն, ոչ էլ՝ չափ ու սահման: Տարածաշրջանի մեջ տիրում է անտառի օրենքը, որը, ափսոս, քաջալերվում է Ամերիկայի նման մեծ պետության կողմից՝ շատ հաճախ այդ ամենի վատ օրինակը հանդիսանալով մեկտեղ: Ապրիլի 8-ին կատարվածը դժվար է աննախընթաց կոչել՝ իր զոհերի թվով, սակայն ահավոր էր Լիբանանի տարածքի մեջ մի քանի րոպեի ընթացքում կատարվածը, իր տարողականությամբ եւ օգտագործված զենքով: Մարդկային յուրաքանչյուր զոհ, ցավալի երեւույթ լինելով հանդերձ, բարեբախտաբար, զոհերի մեջ, որքան ես գիտեմ, հայեր չկային: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ թիրախավորված շրջանները տակավին այս պահին հայահոծ բնակավայրեր չեն ընդգրկում:

- ԱՄՆ-Իրան փխրուն հրադադարին համաձայնելով հանդերձ՝ Թել Ավիվը հայտնեց, որ դա Լիբանանին չի վերաբերում, թեեւ դա, Թեհրանի պնդմամբ, հրադադարի պայմաններից մեկն էր: Թրամփն էլ, «ազատելով Իսրայելի ձեռքերը», արդարացավ, թե այդ երկրի եւ «Հզբոլլահի» կոնֆլիկտն առանձին հարց է: Ի՞նչ սպասել հետո:

- Ավետարանի Դավթի (Հրեա) եւ Գոլեաթի (տեղաբնակ՝ պայմանական պաղեստինցի) հակամարտությունն է, որ անվերջ շարունակվում է այդ տարածաշրջանի մեջ: Ես սա եմ ենթադրում, եւ սա, կարծեմ, հավերժ է, քանի դեռ չկա արդար լուծում երկու կողմերի համար միաժամանակ: «Հզբոլլահ»-ի զորակցությունը Պաղեստինի դատին՝ իրեն հավիտյանս թշնամի ու թիրախ պիտի պահի Իսրայելին, մինչ ո՛չ Իսրայելը, ո՛չ էլ Արեւմուտքը՝ ընդհանրապես, որ իրենք փորձում են կազմաքանդել կամ ոչնչացնել, ոչ թե լոկ մի կուսակցություն, այսինքն՝ «Հզբոլլահ»-ը, այլ իրենց գործն ամբողջ համակարգի հետ է Իրանից՝ Եմեն, Պաղեստին, Լիբանան եւ Իրան: Իրենց գործը, տարօրինակ կերպով, իրենց ոնց որ տակավին անծանոթ շիա գաղափարախոսության դեմ է, որի ղեկավարներին կամ զինյալներին բնաջնջմամբ կարելի է չեզոքացնել: Փորձն էլ ցույց տվեց, որ տեխնոլոգիան ընդդեմ գաղափարախոսության պայքարը միշտ էլ ի նպաստ տեխնոլոգիային չի:

- Հրադադարի մասին հայտարարությունից հետո վարչապետ Սալամը շեշտեց, որ Լիբանանն ուժեղացրել է ջանքերը՝ ձգտելով հասնել Իսրայելի հետ հրադադարի: Նա նշեց, որ Լիբանանի անունից բանակցություններ կարող է վարել միայն պետությունը՝ իր սահմանադրական ինստիտուտների միջոցով: Փաստորեն, նա ոչ մի բանի առջեւ կանգ չառնող Իսրայելի դեմ մենմենակ թողեց «Հզբոլլահ»-ին, այն դեպքում, երբ Իրանը ջանում է դադարեցնել Լիբանանի դեմ հարձակումները:

- Գաղտնիք չէ, որ Լիբանանի, լինեն հանրապետության նախագահի կամ խորհրդարանի ընտրությունները, եւ լինի կառավարության նշանակումը՝ այնքան էլ ներլիբանանյան ընտրություն կամ որոշում չէ: Սա միշտ էլ եղել է արտաքին (որոշող կողմը՝ ըստ ժամանակաշրջանի) թելադրանքներով: Այսօրվա դրությամբ, հանրապետության նախագահը եւ վարչապետը վայելում են ամերիկյան կողմի հովանավորությունը, եւ այս դիտանկյունից նայած, զարմանալի չէ վարչապետ Սալամի կեցվածքը: Սակայն խնդիրը մնում է գործադրության մեջ, որ չափազանց դժվար է նախագահի կամ վարչապետի համար, քանի դեռ այնտեղ կա «Հզբոլլահ»-ը, որը սոսկ կուսակցություն չէ, այլ՝ Լիբանանի բնակչության մեկ երրորդը համարվող ամբողջ համայնք: Եվ նա այնքան էլ մենակ չէ, եթե նկատի առնենք իրանյան բացահայտ հովանավորությունը նշյալ կազմակերպությանը, որ Իրանի գաղափարական, քաղաքական եւ ռազմական փրոքսին է տարածաշրջանի մեջ: Իսկ կառավարության դժվարությունը «Հզբոլլահ»-ի հետ գլուխ ելնելու կամ առանց նրա խաղաղության գնալու Իսրայելի հետ, շատ ավելի դժվար է մի թույլ կառավարության համար, որի պատասխանատվությունն է նաեւ՝ պահել ներքին անդորրությունը, որը պայմանավորված է «Հզբոլլահ»-ի հետ ոչ սուր չհակադրվելու հետ: «Հզբոլլահ»-ը, իր ունեցած կորուստներով հանդերձ, տակավին գետնի վրա շատ լուրջ եւ վտանգավոր ուժ է ներկայացնում: Օրինակ, «Հզբոլլահ»-ը, թե խորհրդարանն էլ (որի մեջ այս պահին այն ունի շատ ազդեցիկ պլոք) կարող է ամբողջովին ամերիկյան կողմը հարող պատգամավորներով ընդգրկվել, վերջերս արգելք հանդիսացավ մայիսի 2026-ի համար նախատեսված խորհրդարանական ընտրությունների կայացմանը, եւ, փաստորեն, այդ ընտրությունները երկու տարով հետաձգվեցին՝ իր պնդումներով:

Արա ԱԼՈՅԱՆ

Ընկել են «օրենքով գողերի» հետեւից

Ընտրությունների նախաշեմին քաղաքական իշխանությունն ընկել է «օրենքով գողերի», քրեական հեղինակությունների հետեւից, նպատակը մեկն է՝ նրանց իրենցով անել, վախեցնել քրեական վարույթներով՝ ստիպելով աշխատել իրենց օգտին: Թիրախում են հատկապես մեծ «ավտարիտետները», օրինակ, պարբերաբար բռնում եւ բաց են թողնում «օրենքով գող» Զապին, նրա շրջապատի անձանց: Երեկ էլ հերթը հասել է «օրենքով գող» եզդի Ջնդի Ամարյանին՝ Ջնդիին: ՔԿ-ն նրան ձերբակալել է «գողականի» ստատուսը պահպանելու, դրան հարելու համար եւ ներակացրել կալանքի, սակայն հայտնի դատավոր Մասիս Մելքոնյանը մերժել է կալանքի միջնորդությունը եւ նրան ազատ արձակել նիստերի դահլիճից: Մեզ պատմեցին, որ քրվարույթով անցնում է նաեւ մարտունեցի գողական, որին Մելքոնյանը եւս ազատ է արձակել՝ կիրառելով վարչական հսկողություն: Քննչական կոմիտեից Ջնդիի վերաբերյալ հաստատում են տեղեկությունը եւ փոխանցում. «Քրեական վարույթի նախաքննության ընթացքում 1 անձի նկատմամբ կիրառվել են տնային կալանք, գրավ եւ բացակայելու արգելք»: Ջնդի Ամարյանի պաշտպան **Գեղամ Հակոբյանն** էլ, անդրադառնալով իր պաշտպանյալի մեղադրանքին, նշեց. «Բացարձակ հիմնավորում չկա, ինքը չի հանդիսանում քրեական հեղինակություն»:

ԱՐՑԱԽ ՉՄԵԿՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐՆ ԱՐԴԱՐԱՑՎԵԼ ԵՆ

Հրեն գերագույն գլխավոր հրամանատար հռչակած Նիկոլ Փաշինյանը, որպես 44-օրյա պատերազմում մեր պարտության պատճառներից մեկը, նշում է զանգվածային դասալքությունը: Գործադիր իշխանությունից կախում ունեցող իրավապահներն էլ փորձում են իրենց որոշումներով, վճիռներով հաստատել զանգվածային դասալքության վերաբերյալ նրանց պնդումները, սակայն ճշմարտությունը, թեկուզ՝ դժվարությամբ, ի վերջո հաղթում է: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բաղանիս գյուղի բնակիչներ Նաիրի Բեգլարյանին, Սերյոժա Հովակիմյանին, Հովակիմ Ալավերդյանին, Եդիգար Եդիգարյանին, Կոթի գյուղի բնակիչ Սուրեն Էվինյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի զինծառայող, ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության ժամանակ հրաժարվել են զինվորական ծառայության առանձին պարտականությունները կատարելուց՝ ՀՀ ՊՆ 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի համապատասխան հրամանով Արցախի Հանրապետություն մեկնելուց եւ պաշտպանության բանակի հրամանատարի ենթակայությանն անցնելուց, որը զուգորդվել է դրա փաստացի չկատարմամբ: Նրանց՝ բոլորին, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 529 հոդվածի 3-րդ մասով («Զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելը, որը զուգորդվել է նրա կողմից դրանց չկատարմամբ կամ փաստացի դադարեցմամբ, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն առաջացրել է մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ հանգեցրել է զորամասում անկարգությունների կամ առաջացրել է այլ ծանր հետեւանք»): 2025թ. ապրիլի 11-ին Բերդ քաղաքում կայացած դատական նիստում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Մարդանյանը վճռել է Եդիգար Եդիգարյանին, Սուրեն Էվինյանին, Նաիրի Բեգլարյանին, Հովակիմ Ալավերդյանին, Սերյոժա Հովակիմյանին մեղավոր ճանաչել նրանց առաջադրված հոդվածով եւ նրանց նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով: Զինվորական դատախազ Վ. Վարդանյանն այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել, որով վերաքննիչ դատարանին խնդրել է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով բեկանել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025թ. ապրիլի 11-ի դատավճիռը, Ե. Եդիգարյանին, Ս. Էվինյանին, Ն. Բեգլարյանին, Հ. Ալավերդյանին, Ս. Հովակիմյանին դատապարտել ազատազրկման 5 տարի ժամկետով: 5 ամբաստանյալների պաշտպանները եւս Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել, որով խնդրել են վերանայել այդ դատավճիռը եւ մեղադրյալներին արդարացնել: Իրականում, 5 մեղադրյալներն Արցախում մասնակցել են մարտական գործողությունների, սկզբում նրանց կողմից հրամանը չկատարելը հետեւանքներ չի ունեցել: Վերաքննիչ դատարանը համաձայնել է մեղադրյալների պաշտպանների այն դատողություններին, որ ՀՀ ՊՆ զորամասի հրամանատարի 2020թ. հոկտեմբերի 14-ի հրամանից պարզ է, որ Արցախ ուղարկվելու համար առանձնացվել է ականանետային մարտկոցը, ուստի հրամանը տրվել է ոչ թե անհատ զինծառայողներին, այլ՝ ստորաբաժանմանը, քրեական գործը հարուցվել է զորամասի հրամանատարի 2020թ. հոկտեմբերի 14-ի թիվ 0125 բանավոր հրամանի չկատարման փաստի առթիվ: Այդ հրամանը նույն օրը չեղյալ է համարվել, փոխվել է զորամասի հրամանատարի 061 (063) մարտական կարգադրությամբ, որով մեղադրյալ 5 զինծառայողները մեկնել են Արցախ, մարտական գործողությունների շրջան, անցել ՊԲ անմիջական ենթակայության տակ: 2025թ. հուլիսի 28-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (նախագահող դատավոր՝ Ա. Բեկթաշյան) որոշել է Տավուշի կայազորի զինվորական դատախազության դատախազ Վ. Վարդանյանի վերաքննիչ բողոքը մերժել, Նաիրի Բեգլարյանի, Եդիգար Եդիգարյանի, Սերյոժա Հովակիմյանի, Հովակիմ Ալավերդյանի եւ Սուրեն Էվինյանի պաշտպանների վերաքննիչ բողոքները բավարարել. Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2025թ. ապրիլի 11-ի դատավճիռը բեկանել եւ կայացնել նոր դատական ակտ, ճանաչել եւ հռչակել Ն. Բեգլարյանի, Ե. Եդիգարյանի, Ս. Հովակիմյանի, Հ. Ալավերդյանի եւ Ս. Էվինյանի անմեղությունը, նրանց արդարացնել՝ նրանց մեղսագրվող արարքը կատարած չլինելու հիմքով: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ-զինվորական դատախազն այդ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել: Նաիրի Բեգլարյանի պաշտպան, փաստաբան Վահագն Հակոբյանից տեղեկացա, որ զինվորական դատախազի վճռաբեկ բողոքը մերժվել է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ-ում քանի՞ անձ է ոտքին նախարարության «բրասլետ» կրում

Նախօրեին Երեւանի հայտնի սրճարաններից մեկում նկատեցինք՝ սրահում գտնվող անձանցից ոմանց ոտքին «բրասլետ» կար, պատկերացրեք՝ ոչ թե սովորական աքսեսուար, այլ՝ արդարադատության նախարարության կողմից տրամադրվողներից, ինչը նշանակում է, որ անձինք անցնում են քրեական վարույթներով, եւ նրանց նկատմամբ կիրառված է խափանման միջոց վարչական հսկողություն: Հատուկ «բրասլետը» կրում են նաեւ տնային կալանքի տակ գտնվող անձինք:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարությունը 2024-ին Լեհաստանից գնեց 200 էլեկտրոնային թեւնոց՝ տնային կալանքի եւ վարչական հսկողության պահպանումը վերահսկելու համար: 2023 թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունը եւ լեհական Enigma information protection systems ընկերությունը պայմանավորվել էին 1000 էլեկտրոնային սարք ձեռք բերելու մասին, որոնցից 650-ը նախատեսված էր տնային կալանքը վերահսկելու, 350-ը՝ վարչական հսկողության համար:

Այժմ քանի՞ անձ է գտնվում վարչական հսկողության եւ տնային կալանքի տակ՝ փորձեցինք պարզել արդարադատության նախարարությունից: «Ապրիլի 10-ի դրությամբ 946 անձ գտնվում է տնային կալանքի, 1256-ը՝ վարչական հսկողության տակ: Ընդհանուր՝ 2202»:

Ոտքին էլեկտրոնային սարք կրողներն արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության շահառու են, ծառայությունն իրականացնում է մեղադրյալի բնակության վայրի տարածքի նշագրում եւ սահմանում, թե մեղադրյալը որ հատվածներ չի կարող դուրս գալ: Հստակ սահմանվում են թույլատրելի տարածքի սահմանները: Էլեկտրոնային հսկողության հիմնական սարքը եւ մեղադրյալի վրա տեղադրվող սարքը միայն աշխատում են կոնկրետ հեռավորության պարագայում: Եթե մեղադրյալը նշագրված տարածքի սահմաններից դուրս է գալիս, հիմնական սարքն ազդանշան է տալիս:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԻԱՆՈՒՄ Է ՀԱԿԱԹՐԱՄՓՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻՆ

ԱՄՆ

Փաշինյանը որոշել է Հայաստանը ներքաշել մի նոր ավանտյուրայի մեջ, նրա իշխանությունը միացել է հակաթրամփյան կոալիցիային, որի նպատակն ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի պաշտոնանկությանը հասնելն է: Ամերիկյան քաղաքացիություն ունեցող, քաղաքագետ Հայկ Մարտիրոսյանը սոցցանցի իր էջում հրապարակել է ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանի սոցցանցի իր օգտահաշվում տեղադրված տեսանյութը՝ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքին, որ տեսանյութը դեսպան Մկրտչյանը նկարել է նախագահ Թրամփի՝ Ֆլորիդայում գտնվող Մար-ա-Լագո անձնական նստավայրից, եւ տեսանյութում ՀՀ դեսպանը նախ ցուցադրում է Դոնալդ Թրամփի առանձնատան պատին կախված ռուսական ցար Պետրոս 1-ինի դիմանկարը, եւ որ տեսանյութը դեսպանը ձեւավորել է երգիչ Թիմոթի Ուիլյամսի 2025-ին թողարկված The Mar-A-Lago Shuffle երգով, որը պարունակում է ծայրահեղ ծաղր եւ վիրավորանքների շարան՝ ուղղված նախագահ Դոնալդ Թրամփին: Քաղաքագետ Մարտիրոսյանը տեղի ունեցածի վերաբերյալ իր բացատրություններն ունի՝ դեսպանի մոտ խելքի բացակայություն կամ դիվանագիտության նրբություններին չտիրապետելը, բայց մենք համոզված ենք, որ տեղի ունեցածը շատ լավ հաշվարկված եւ գիտակցված ակցիա է, համաձայնեցված պաշտոնական Երեւանի՝ Փաշինյանի հետ:

Իրանի դեմ պատերազմում ԱՄՆ-ի նահանջն էապես խարխլել է նախագահ Դոնալդ Թրամփի դիրքերը: Տեսակետ կա, որ ԱՄՆ-ի կողմից Իրանի դեմ հարձակումը հրահրվեց հենց այդ նպատակով՝ ԱՄՆ-ն ներքաշել անհեռանկար պատերազմի մեջ, որում հաղթել հնարավոր չէ, դրա միջոցով Թրամփի հեղինակությանը հասցնել այնպիսի վնաս, որ նա չկարողանա պահել իր իշխանությունը: ԱՄՆ-ում լիբերալ գլոբալիստները՝ Դեմոկրատական կուսակցության տեսքով, ձգտում են ռեւանշի, որը կարող է տեղի ունենալ ինչպես Թրամփին իմպիչմենտ հայտնելու, իսկ եթե դա չստացվի նոյեմբերին կայանալիք Կոնգրեսի ընտրությունների ժամանակ, եթե հանրապետականներն այդ ընտրություններում պարտություն կրեն, Թրամփի իշխանության հարցը կարելի կլինի համարել լուծված:

Եվրոպայում եւս իշխանությունը մեծամասամբ գտնվում է լիբերալ գլոբալիստների ձեռքում. ընդամենը մեկ-երկու երկիր՝ Հունգարիա, Սլովակիա, որ չեն ձայնակցում Բրյուսելի գլոբալիստական երգչախմբին: Եվրոպական երկրները որեւէ օգնություն ցույց չտվեցին ԱՄՆ-ին՝ Իրանի դեմ պատերազմում, ինչը Դոնալդ Թրամփին ստիպում է խոսել այդ կառույցի անգործունակության եւ ԱՄՆ-ի համար անօգտակարության մասին: Թրամփը նույնիսկ հայտարարում է այդ կառույցը լքելու ԱՄՆ մտադրության մասին: Միայն թե նա կարող է չհասցնել դա անել:

Ապրիլի 12-ին Հունգարիայում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ, որը եւս ԱՄՆ-Եվրոպա դիմակայության մի դրվագ է: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն ակնհայտորեն պաշտպանում է գործող վարչապետ Վիկտոր Օրբանի թեկնածությունը: «Վիկտորը քրտնաջան աշխատում է Հունգարիան պաշտպանելու, տնտեսությունը զարգացնելու, աշխատատեղեր ստեղծելու, առեւտուրը խթանելու, անօրինական ներգաղթի դեմ պայքարելու օրենքը եւ կարգուկանոնը պահպանելու համար: Ես լիովին եւ անվերապահորեն աջակցում եմ նրա վերընտրությանը՝ որպես Հունգարիայի վարչապետ»,- ասել է Թրամփը: Դրան հակառակ, ԵՄ բազմաթիվ երկրներ, ինչպես նաեւ՝ բրյուսելյան եվրաչինովնիկները, ակնհայտորեն պայքարում են Հուգարիայում իշխանափոխության հասնելու համար, քանի որ Օրբանն իր քվեարկություններով, վետոներով խոչընդոտում է համաեվրոպական տարբեր ծրագրերի իրականացմանը, պահանջում է դադարեցնել Ռուսաստանի դեմ կիրառվող էներգետիկ պատժամիջոցները, դեմ է Ուկրաինային 90 միլիարդի վարկային միջոցներ տրամադրելու ծրագրին, որը կարեւոր պայման է՝ պատերազմը շարունակելու համար: Եթե Վիկտոր Օրբանը պարտվի, դա եւս մեկ ծանր հարված կլինի Դոնալդ Թրամփի առանց այն էլ նվազող հեղինակությանը, ցույց տալով, որ նրա աջակցությունը որեւէ արժեք չունի, եւ այդ աջակցությունը ընտրություններում հաղթելու համար ոչ թե օգնող, այլ խոչընդոտող հանգամանք է:

Փաշինյանը եւս ընտրության առաջ է, ոչ միայն հունիսի 6-ին նշանակված խորհրդարանական, այլեւ պահպանողական Թրամփի եւ լիբերալ գլոբալիստական եվրաչինովնիկության միջեւ: ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանն իր հրապարակած տեսանյութով ազդակ է ուղարկում, որ փաշինյանական ռեժիմը եւս միանում է հակաթրամփյան կոալիցիային, որ իրենք եւս Դոնալդ Թրամփին համարում են ռուսական դրածո՝ ռուսական ցար Պյոտր 1-ի դիմանկարի ցուցադրությունը դրա մասին է, իսկ Թրամփի հասցեին վիրավորանքներ պարունակող Թիմոթի Ուիլյամսի The Mar-A-Lago Shuffle երգը՝ նրա հեղինակազրկված լինելու: Փաշինյանն առաջնորդվում է բրիտանական հայտնի ձեւակերպմամբ, թե չկան մշտական դաշնակիցներ եւ թշնամիներ, կան մշտական շահեր, շահ ասելով նկատի է առնվում ոչ թե երկրի, այլ անձնական, իշխանական շահը: Փաշինյանի միանալն այդ կոալիցիային, դրան ոչնչով չի ուժեղացնում, բայց այստեղ կարեւորը դիրքորոշում ունենալը եւ այն ցուցադրելն է:



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԷԼԻ ՄԱՐԴ ԿԱ՞, ՈՐ ԻՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՆՎԻՐԵԼՈՒ Է ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Գագիկ Ծառուկյանի հայտարարությունը, որ խորհրդարան անցնելուց հետո ինքը վարչապետի թեկնածու չի լինելու եւ Ռոբերտ Քոչարյանի պարագայում էլ չի աջակցելու նրան, բուռն ոգեւորություն է առաջացրել ոչ թե ՔՊ-ում, այլ ՀՀԿ-ին առնչակից կիսաքաղաքական բոստաններում, ի մասնավորի՝ հարգարժան Սամվել Ֆարմանյանի եւ «յոթծովիմերան» Նարեկ Մալյանի ֆեյսբուքյան տնամերձներում: Բա որ ասում էինք, բա որ այսքան աղաղակում էինք, որ Ռոբերտ Քոչարյանն անցողիկ չէ… Տեսամ՛ք Գագիկ Ծառուկյանն էլ է մերժում նրան: ՔՊ-ն, սակայն, Գագիկ Ծառուկյանի այդ հայտարարությունից, ինչպես ասացի, այս տղաների չափ ոգեւորված չէ:

Ես ՔՊ-ի հետ որեւէ խնդիր չունեմ: Իրենց իրավունքն է, ինչպես ուզում են՝ թող մեկնաբանեն Գագիկ Ծառուկյանի այդ հայտարարությունը: Ինձ մտահոգում են Սամվել Ֆարմանյանի եւ Նարեկ Մալյանի ֆեյսբուքյան «հոգեցունց» գրառումներն այդ կապակցությամբ, որոնք գրեթե տառեւտառ համընկնում են: Տղաներ, դուք լո՞ւրջ եք ասում, դուք իսկապե՞ս մտածում եք, որ Գագիկ Ծառուկյանը, որ այսպես աղմուկ-աղաղակով խորհրդարան է գնում, կարող էր հայտարարել, թե դա անում է ոչ իր ուժի թեկնածուին վարչապետ դարձնելու նպատակով: Մարդն ասում է՝ ես իմ թիմում վարչապետի 4 թեկնածու ունեմ… Եվ, ուրեմն, պարոնայք Ֆարմանյան եւ Մալյան, ինչո՞ւ եք խեղաթյուրում Գագիկ Ծառուկյանի՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու նպատակները:

Ես հիմա արդեն լուրջ կասկածներ ունեմ, որ ՔՊ-ական քարոզչամեքենայի բաց թողած հիմար թեզը, թե Սամվել Կարապետյանը մասնակցում է խորհրդարանական ընտրություններին, որպեսզի հաղթի եւ իր հաղթանակը «նվիրի» Ռոբերտ Քոչարյանին, առաջացել է նույն հարթակում, որտեղ հաճախ են լինում հիշատակածս քաղաքագետները՝ Սամվել Ֆարմանյանը եւ Նարեկ Մալյանը: Իսկ թե ով է ղեկավարում այդ հարթակը, որ ստեղծվել է «Հայաստան» դաշինքի մասին սուտ լուրեր տարածելու համար, թույլ տվեք ասել, դժվարանում եմ գլխի ընկնել: Բայց ով էլ լինի այդ հարթակի ղեկավարը, պիտի ասեմ, որ քաղաքական իմաստով սահմանափակ ուղեղի տեր անձնավորություն է, ոչ այն է՝ բացահայտ նիկոլական, ոչ այն է՝ լավ ծպտված ընդդիմադիր:

Վերջերս Արամ Զավենի Սարգսյանը բաց տեքստով հայտարարել էր, որ «Հանրապետություն» կուսակցությունը միայնակ է մասնակցելու խորհրդարանական ընտրություններին, հաղթահարելու է անցողիկ շեմը եւ աջակցելու է Նիկոլ Փաշինյանին՝ վերարտադրվելու վարչապետի պաշտոնում: Տափա՞մկ հայտարարություն է… Իհարկե: Բայց ասեմ՝ ազնիվ է: Զավենիչը չի դավաճանել իրեն: Ինչ կա, ինչ գիտի քաղաքականության մասին, այդ էլ ասում է՝ իր թիմին, կներեք, շան տեղ չդնելով: Գագիկ Ծառուկյանն ասում է՝ ես վարչապետի 4 թեկնածու ունեմ: Արամ Զավենիչը, փաստորեն, մեկն էլ չունի, չնայած որ հենց ինքն է մի ժամանակ (Ռոբերտ Քոչարյանի օրոք) վարչապետ եղել: Բայց եկեք փառք տանք Աստծուն, որ Սամվել Ֆարմանյանն ու Նարեկ Մալյանը, լսելով Արամ Զավենիչի հայտարարությունը՝ խորհրդարան մտնելու նպատակների մասին, իրենց ֆեյսբուքյան տնամերձներում չեն գրել, որ Արամ Զավենիչը «մերժել» է Ռոբերտ Քոչարյանին, հետեւաբար, «Հայաստան» դաշինքն անցողիկ շեմը հաղթահարելու շանս չունի:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԿՐՈՆ

ՈՐՔԱՆՈՎ Է ԻՐԱՎԱՉԱՓ ԿԱՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԲԱՆՏԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂՆԵՐԻՆ ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԻՑ ԶՐԿԵԼԸ

Ապրիլի 6-ին հայտնի դարձավ, որ Հայ առաքելական եկեղեցու Արգավանդի Սբ Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Հովհաննիսյանին արգելել են այցելել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ այն դեպքում, երբ նա 15 տարի այցելել է քրեակատարողական հիմնարկներ, մատուցել հոգեւոր-կրոնական ծառայություն՝ ազատազրկման եւ կալանքի վայրերում գտնվող անձանց համար: Միջազգային իրավունքի տեսակետից որքանով է իրավաչափ ազատազրկման վայրերում գտնվողներին՝ կալանավորվածներին եւ դատապարտյալներին իրենց հոգեւոր-կրոնական պահանջմունքների բավարարումից զրկելը:

Խոսքի, խղճի, կրոնի ազատությունը հանդիսանում է մարդու հիմնարար, բնական ու անօտարելի իրավունքներից մեկը, որը ճանաչված է միջազգային իրավունքի համակարգի կողմից: Այդ իրավունքը պահպանում է իր ուժը նաեւ ազատազրկման պարագայում: ՄԱԿ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ընդունված 1948 թվականին, 18-րդ հոդվածով երաշխավորում է, որ յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք՝ ներառյալ նաեւ իր կրոնն անհատապես կամ խմբային եղանակով դավանելու, պրակտիկ արտահայտման իրավունք: Սա բնական ու անօտարելի իրավունք է, որը տարածվում է նաեւ ազատազրկման վայրերում գտնվողների վրա եւ, կարելի է ասել՝ ենթակա չէ սահմանափակման:

Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագիրը (ICCPR), ընդունված 1966 թվականին, 18-րդ հոդվածով երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության՝ ներառյալ նաեւ իր կրոնը դավանելու ազատության, ինչպես անհատական կերպով, այնպես էլ՝ խմբային: ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտեն իր մեկնաբանությունում ընդգծել է, որ այդ իրավունքը տարածվում է նաեւ ազատազրկման վայրերում գտնվող անձանց վրա: Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի ECHR-ի 9-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրոնի եւ համոզմունքների ազատություն, եւ այդ իրավունքը ներառում է կրոնը դավանելու, ուսուցանելու, ծիսակատարությունների մասնակցելու իրավունքը: Կոնվենցիայի մեկնաբանության մեջ նշված է, որ ազատազրկման վայրերում գտնվող անձինք շարունակում են օգտվել իրենց բոլոր հիմնարար իրավունքներից, բացառությամբ ազատության իրավունքի, որն օրինականորեն սահմանափակված է: Ինչ է սա նշանակում: Թերեւս այն, որ պետությունը ոչ միայն պարտավոր է չխոչընդոտել ազատազրկման վայրերում գտնվողների կրոնական կյանքին, այլեւ ընդհակառակը՝ պարտավորված է ապահովել պայմաններ կրոնական կյանքի կազմակերպման եւ իրականացման համար:

ՄԱԿ-ի՝ Ազատազրկման վայրերում գտնվողների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն չափանիշների կանոնները կամ Նելսոն Մանդելայի կանոնները սահմանում են, որ ազատազրկման վայրում գտնվողները պետք է իրավունք ունենան դավանելու իրենց կրոնը, ազատազրկման վայրում գտնվողների համար իրենց կրոնի սպասավորների հասանելիությունը պետք է ապահովված լինի, ազատազրկման վայրում գտնվողները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու կրոնական ծիսակատարություններին, եւ նաեւ պետք է առկա լինի կրոնական գրականություն: Եվրոպայի խորհրդի բանտային կանոնները (European Prison Rules) սահմանում են, որ ազատազրկման վայրում գտնվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի բավարարելու իր կրոնական պահանջները, եւ պետք է ապահովվի կրոնական գրականություն եւ հոգեւոր-կրոնական աջակցություն, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան 9-րդ հոդվածով սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրոնի ազատության իրավունք, եւ այդ իրավունքը ներառում է կրոնի դավանումը, ուսուցանումը եւ ծիսակատարությունների կատարումը: Սահմանափակումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ օրենքով է նախատեսված եւ անհրաժեշտ է դեմոկրատական հանրության համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ ՄԻԵԴ-ը, բազմաթիվ անգամներ է ընդգծել, որ եթե անձը գտնվում է ազատազրկման վայրում, դա չի նշանակում, որ նա կորցնում է իր կրոնական ազատության իրավունքը: Իր քննած գործերի եւ կայացրած նախադեպային որոշումներով՝ ՄԻԵԴ-ը մշակել է ընդհանուր մոտեցումներ, որոնց համաձայն, ազատազրկման վայրերում գտնվողները պահպանում են բոլոր իրավունքները, ներառյալ կրոնական ազատության իրավունքը, բացառությամբ այն իրավունքների, որոնք անխուսափելիորեն սահմանափակված են ազատազրկված լինելու իրողությամբ, պետությունները պարտավոր են ապահովել հավասարակշռություն ազատազրկման վայրում գտնվողների իրավունքների եւ ազատազրկման վայրի ռեժիմի ու կարգապահության միջեւ: Ցանկացած սահմանափակում պետք է լինի համաչափ: 2003 թվականին քննված «Պոլտորոցկին՝ ընդդեմ Ուկրաինայի» գործում ՄԻԵԴ-ը գտել է, որ խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածը, երբ ազատազրկման վայրում գտնվողին մերժվել է ապահովել իր կրոնի սպասավորի հասանելիությունը: Դատարանը սահմանել է, որ պետությունը պարտավոր է ապահովել իրական հնարավորություն՝ կրոնի ազատության իրավունքի իրացման համար: Կարծում ենք, որ բերվածը բավարար է, որպեսզի պարզ լինի, թե տեղի ունեցածը որքանով է «իրավաչափ» ու համապատասխան միջազգային օրենքներին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԻՐԵԼԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ, ՄԵՐ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՌՋԵՎ ՃԱՆԱՊԱՐՀ ԲԱՑԵՔ՝ ԹՈՂ ՀԵՐՈՍԱՆԱ



Սիրելի հավատացյալներ, այն, ինչ հիմա ձեզնից խնդրում եմ, պարզապես խնդրանք չէ, նաեւ հրատապ, կանխարգելիչ զգուշացում է:

Եթե առաջիկայում, որեւէ եկեղեցում, պատարագի ամենախաղաղ պահին հանկարծ ներս խուժի մեր վարչապետը՝ իր քաջասիրտ թիկնազորի գլխավորությամբ, խնդրում եմ՝ այս անգամ չզարմանաք ու չշփոթվեք: Չասեք՝ «ներխուժեց», չվրդովվեք: Պարզապես մի կողմ քաշվեք եւ ճանապարհ բացեք: Մարդը ձեզ փրկելու է եկել:

Դուք նախորդ անգամ Սուրբ Աննա եկեղեցում այդպես էլ չհասկացաք, թե ինչ տեղի կունենար ձեր աչքի առաջ: Ձեր կարծիքով՝ վարչապետի այցն անակնկալ էր կամ հերթական «միջադեպ» հրահրելու համար էր: Մինչդեռ ոչ թե պարզապես մտավ, այլ կայծակնային արագությամբ ներխուժեց ճիշտ այնտեղ, որտեղ դուք, անտեղյակ, շարունակում էիք ձեր հոգեւոր կենտրոնացումը: Նա չէր կարող կանգնել ու բացատրել՝ «ներեցեք, մի կողմ քաշվեք, ես հիմա ահաբեկչություն եմ կանխում»: Դա այն մակարդակի օպերացիա չէր, որ ուղեկցվեր նախազգուշացնող հայտարարություններով: Իսկ դուք չդիմացաք մի չնչին հրմշտոցին, դժգոհեցիք, արդյունքում՝ աղմուկ, անհամաձայնություն, մի քանի ձերբակալված... Եվ վերջ:

Իրականում, դուք կանգնած էիք մի իրադարձության կենտրոնում, որը, եթե չխափանեիք, կարող էր հայտնվել համաշխարհային պատմության դասագրքերում՝ առանձին գլխով: Բայց դուք, ինչպես միշտ, ոչինչ չգիտեք ու չեք էլ ուզում իմանալ: Ո՛չ լուրջ աղբյուրների եք հետեւում, ո՛չ էլ այն տեղեկատվությանը, որը հասանելի է միայն ընտրյալներին: Իսկ երբ մարդը գործում է այդ մակարդակի տեղեկություններով, բնական է, որ ձեր աչքին ամեն ինչ «անհասկանալի» կթվա: Մինչ դուք պատարագի մեջ էիք, վարչապետն ու իր քաջահմուտ թիկնազորն արդեն օպերացիայի մեջ էին. ստացված էին հստակ տվյալներ՝ եկեղեցու ներսում, հավատացյալների մեջ տեղակայված է հատուկ պատրաստված ահաբեկչական մի խումբ: Արտաքինից՝ խոնարհ, ներսից՝ վտանգավոր: Սպասում էին իրենց պահին: Ահաբեկչությունը, կարելի է ասել, արդեն շնչում էր ձեր թիկունքում, իսկ դուք՝ մոմի լույսի տակ, ոչինչ չէիք տեսնում, ոչինչ չէիք կռահում: Եվ այդ պահին հայտնվում է մեր ունեցած «ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱՆ»: Չի կանգնում, չի բացատրում, չի բանակցում: Կայծակնային արագությամբ մտնում է ներս, ճեղքում է շարքերը, առաջ շարժվում դեպի թիրախը: Դա օպերացիա էր, ոչ թե այցելություն: Այդպիսի պահերին չեն ասում՝ «ներեցեք, մի կողմ քաշվեք»: Դուք պիտի ինքներդ հասկանայիք: Բայց չհասկացաք: Սկսեցիք նեղվել, աղմկել, դիմադրել, նույնիսկ՝ խոչընդոտել: Թիկնազորը փորձում էր ճանապարհ բացել, դուք՝ փակել, ընդդիմանալ: Կարծես ընդդիմության հանրահավաք էր: Արդյունքում՝ այն, ինչ պիտի ավարտվեր մի քանի վայրկյանում, ձգձգվեց, խառնվեց, ու... տապալվեց: Թիրախը փախավ: Չվնասազերծված՝ հանգիստ փախավ: Ձեր շնորհիվ: Դուք, բնականաբար, պատկերացում անգամ չունեիք, որ այդ գործողությունը միայն առաջին փուլն էր: Ամենակարեւորը դեռ առջեւում էր: Նախատեսված էր ոչ միայն տեղում վնասազերծել այդ «խոնարհ» խմբին, այլ նաեւ՝ անցնել երկրորդ, շատ ավելի լուրջ փուլին: Պլանը պարզ էր, բայց «մեծություններին հատուկ» մտածողություն էր պահանջում: Վնասազերծված խումբը, որ հարեւան պետությունից էր մեզ մոտ «առաքված», պատշաճ ձեւով՝ շղթայված (ինչ անես՝ ավանդույթները պետք է հարգել), պիտի ներկայացվեր հարեւան երկրի ղեկավարությանը: Այո՛, հենց այդպես՝ անձամբ տանել, կանգնեցնել ու հարցնել. «Էս ի՞նչ բանի են»: Կամ՝ ավելի ուղիղ. «Եղբայր, դո՛ւ այս ինչ բանի ես»: Սա արդեն այն մակարդակն է, որտեղ ոչ թե հայտարարություններ են արվում, այլ՝ պատասխաններ են պահանջվում: Ու ո՞վ պիտի դա աներ, եթե ոչ ամենակարող մեր վարչապետը: Ափսոսանքով եմ ասում՝ դուք չթողեցիք: Դուք որոշեցիք, որ ավելի կարեւոր է նեղանալը, քան պատմական գործողությանը չխանգարելը: Արդյունքում՝ ո՛չ խումբը բռնվեց, ինչպես պետք էր, ո՛չ «երկրորդ փուլը» կայացավ, ո՛չ էլ դուք հասկացաք, թե ինչ կորցրիք: Փոխարենը՝ հիմա ունեք ձեր բացատրությունները՝ «ներխուժում էր», «չպետք է այդպես», «եկեղեցի է, հո գժատուն չէ»: Իսկ իրականում՝ պարզապես չկարողացաք տարբերել օպերացիան քաղաքականությունից:

Այս ամենը հաշվի առնելով՝ հիմա հստակ նախազգուշացնում եմ. եթե կրկին նման իրավիճակում հայտնվեք, մի խառնվեք: Ձեր օգնությունը պետք չէ: Այն երբեք պետք չի եղել: Ձեր չխանգարելն արդեն բավարար ներդրում է: Պարզապես մի կողմ քաշվեք: Ճանապարհ բացեք: Թույլ տվեք, որ այս անգամ մարդը ոչ միայն հասնի թիրախին, այլ նաեւ ավարտին հասցնի այն, ինչ նախորդ անգամ դուք այդպես էլ թույլ չտվեցիք:

Որովհետեւ այս անգամ ոչ միայն առաջին փուլը կհաջողվի, այլեւ կիրագործվի երկրորդ փուլի ծրագիրը՝ չափազանց կարեւոր՝ մեր «ազգի գլխին կախված վտանգի» հարցը մեր վարչապետն անվարան կհասցնի իրական հասցեատիրոջը:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՊԵՏՔ Է ԱՅՆՔԱՆ ԽԵԼՈՔ ԼԻՆԵՆՔ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԳՈՆԵ ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆ

Դարցազրույց Հայաստանի ժողովրդական նկարիչ **Փարավոն Միրզոյանի** հետ

- Մեր այս նոր Հայաստանում մշակույթը, մասնավորապես արվեստը, ինչ վերաբերմունքի է արժանանում, ունե՞նք զարգացնելու, տարածելու, արժեւորելու համակարգված մոտեցում:

- Երբ Յակուլովի ցուցահանդեսը կազմակերպեցինք եւ բացեցինք Տրետյակովյան պատկերասրահում, ինձ հրավիրեցին Ռուսաստանի նկարիչների ակադեմիա՝ պարոն Ծերեթելիի մոտ, որ այդ ակադեմիայի արվեստի բաժնի նախագահն էր: Ասաց՝ ես ծանոթ եմ Ձեր արվեստին եւ ուզում եմ առաջարկել, որ լինեք մեր նկարիչների ակադեմիայի անդամ: Այսինքն, այդ վերաբերմունքը մնացել է այդ մարդկանց մեջ: Մեր կերպարվեստն էլ պետք է այդպիսի վերաբերմունքի արժանանա եւ այդ հայացքով զարգանա մեր նկարիչների համար, որովհետեւ մենք իսկապես լավ նկարիչներ ունենք, լավ ստեղծագործողներ, որոնք այսօր համարյա թափառում են: Այն ուժը, որին ասում ենք՝ նկարիչների միություն, ցավոք, հստակ գաղափարախոսություն չունի եւ հնարավորություններ, որպեսզի մեր նկարիչներին կարողանա ներկայացնել ինչպես դրսի աշխարհին, այնպես էլ՝ ներսում: Փոխարենը մանր-մունր բաներ է անում, այստեղ ցուցահանդես, այնտեղ ցուցահանդես, որոնք ոչինչ չեն տալիս:

Պիտի պետականորեն մտածել, բայց այդ պետական ասված հասկացությունն այսօր չկա ո՛չ գյուղատնտեսություն մեջ, ո՛չ էլ՝ մշակույթի: Եվ դա ինձ ցավ է պատճառում: Մենք խոսում ենք, բայց այս 35 տարվա մեջ մի խելքը գլխին բան չկարողացանք անել, չկարողացանք մետրոյի մի կայարան բացել: Չկարողացանք ընկերներ գտնել, բարեկամներ գտնել, որ նեղ ժամանակ գային՝ կողքիդ կանգնեին, գոնե ձեռքդ բռնեին, ցավակցեին: Այդ էլ չեղավ: Մենք կարողացանք այդքան դժվար պահել մեր Արցախը եւ այդքան հեշտությամբ հանձնել: Ավելի լավ էր մեռնեինք պրծնեինք: Բաներ կան, որոնց շուրջ պետք է խելամիտ մտածել: Մենք չունեցանք ո՛չ բարեկամներ, ո՛չ ընկերներ: Հիմա էլ այնպիսի իրավիճակ է երկրում, երբ անընդհատ խոսում են հեռուստացույցով, բաներ ասում: Խելացի մարդիկ շատ կան, բայց այդ խելքը հեչ պիտանի չէ, օգտակար ոչինչ չի անում:

- Մենք այսօր էլ ունենք լավ նկարիչներ, բայց կարողանո՞ւմ ենք աշխարհին ներկայացնել նրանց արվեստը կամ նախ այստեղ՝ ներսում ճանաչել: Ո՞վ պետք է անի, եւ ի՞նչ պետք է արվի:

- Մենք չենք կարողանում, որպես պետություն, մեր արվեստը ճիշտ ներկայացնել աշխարհին, մինչեւ անգամ մեր մեծերին՝ Սուրենյանց, Թադեւոսյան եւ մյուսներ, չենք կարողանում ներկայացնել: Դա պետության կողմից արվեստի ոչ ճիշտ կազմակերպչական քաղաքականություն է, եւ մենք մնում ենք դուրս: Աշխարհի նկարիչների մասին գրքեր են տպագրվում, եւ մենք չենք կարողանում մեր մեծերին մտցնել այդ ցուցակի մեջ: Երբ ես պատկերասրահի տնօրեն էի, աշխատում էի մեր մեծերից գոնե մեկ-երկու գործ մտցնել այդ ցանկի մեջ: Եթե չեն ցուցադրվում, դա նշանակում է, որ մեր երկրի մշակույթի զարգացման մասին հոգ չեն տանում: Պետք է կարողանան մեր այսօրվա վարպետներին էլ դրսում ներկայացնել եւ ճիշտ ներկայացնել: Իսկ սրանք ծրագիր չունեն, ես միշտ ասել եւ ասում եմ՝ պետք է լինի առանձին մշակույթի նախարարություն, առանձին գյուղատնտեսության նախարարություն, այդ ժամանակ կարող է ինչ-որ բան զարգանալ: Պետք է ծրագիր լինի, թե ինչպես դրսում ներկայացնել մեր նկարիչներին, ինչպես այստեղ արժեւորել նրանց: Նաեւ չափանիշները կփոխվեն, կտարբերվեն նկարիչները մեկը մյուսից, իսկ հիմա ամեն ինչ խառնվել է իրար: Լուրջ պետք է մոտենալ:

- Դուք այն սերնդից եք, որ տեսել է ե՛ւ Արցախի ազատագրումը, ե՛ւ տեսավ անկումը: Այսօր Արցախում գոնե մեկ հայ չի ապրում: Այս եւ նման իրողություններն ինչպե՞ս է անդրադառնում արվեստագետի, նկարչի ներաշխարհի վրա:

- Դա ինձ համար մեծ ցավ է: Ես եղել եմ Արցախում եւ մեծ պանոն եմ նկարել՝ ընդգրկելով ամբողջ Հայաստանը՝ Արցախով, մեր այդ բնաշխարհը, որը հրաշք է: Ես չեմ կարողանում այդ մտքի հետ հաշտվել, այդ կորստի ցավով ապրել: Իսկ երբ վերադառնում էի Արցախից, թեւերս լայն բացած՝ այդ աշխարհը գրկելով, լուսանկարվեցի, ասում էի՝ այս ամբողջն իմն է: Դե, իսկ հիմա ո՞նց պիտի ապրենք, ի՞նչ պիտի զգանք: Ես երբեմն մեղադրում եմ մեծ տերություններին, որ մեր կողքը չկանգնեցին՝ այս մի փոքր ժողովրդի, հանուն արդարության: Եվ ոչ մի անգամ էլ չեն կանգնել: Այսօր էլ նույն վիճակում ենք, ինչպես 100 տարի, 200 տարի առաջ էր: Այսպես չի կարելի, այսպես չպետք է շարունակվի:

- Իսկ ի՞նչ պետք է անենք, որ չշարունակվի:

- Փոքր ժողովուրդները պետք է լինեն մեծ պետությունների հետ դաշնակից. դու մենակ չես կարող ոչինչ անել: Այսօր տեսնում ենք, թե ինչ պատերազմ է Իրանի դեմ: Տեսնում ենք, թե ինչ աշխարհամասում ենք գտնվում, ինչ է կատարվում: Տեսնում ենք, թե ինչպես ամեն մեկն իր շահն է ուզում, իր նավթն է ուզում: Եվ մենք այսօր, այս խելահեղ իրականության մեջ, ուղղակի պետք է ունենանք դաշնակիցներ, որոնց հետ կարողանանք բարեկամություն անել, ընկերություն անել: Իսկ մենք չունենք, ոչ մեկին չունենք:

- Կա Կիլիկիայի մանրանկարչություն, եւ էլի այլ երեւելի դպրոցներ ենք ունեցել միջնադարում, ինչպե՞ս վարվենք մեր մանրանկարչության հետ: Մատենադարանի ձեռագրերը նկարազարդված են նաեւ դրանցով, որոնք չեն տեղավորվում «իրական Հայաստանի մեջ», ի՞նչ անենք, ուղարկենք Թուրքիա՞:

- Դա ծիծաղելի է, երբ այդ մասին խոսում ենք, ինձ թվում է, որ մենք իմաստուն ազգ չենք: Ես մի բան գիտեմ, որ մեծ արվեստը զարգանում է պետության մեջ: Առաջին հերթին պետք է լինի պետություն, որ բոլոր բնագավառները զարգացում ապրեն: Ցավոք, այսօր դեռ չունենք այդ պետությունը: Մատենադարանի շենքը, Գիտությունների ակադեմիայի շենքը եւ այլ մշակութային կառույցներ ստեղծվել են անցյալ դարում: Այս վերջին 35 տարում մենք չստեղծեցինք այնպիսի կենտրոններ, որպեսզի մեր մշակույթը զարգացում ունենար, որպեսզի կարողանայինք գնահատել արժեքները՝ ինչպես հինը, այնպես էլ՝ ստեղծվող նորը:

Երբ պատկերասրահի տնօրեն էի, հասկացա, որ մեր մշակույթի զարգացումը եւ մեր արվեստագետների բարձր մակարդակը չեն համապատասխանում մեր այսօրվա ունեցածին: Ասենք, օրինակ, Ազգային պատկերասրահը փոքր մի շենք է ընդամենը: Մեզ պետություն է պետք՝ նորմալ, զարգացած: Մի ուժ, որ մեր ժողովրդին տեր լինի, ստեղծած արժեքներին տեր լինի: Եվ պետք է այնքան խելոք լինենք, որ կարողանանք գոնե մեր պետությունը պահպանել: Մեզ հիմա միայն դա է պետք:

- Ձեր կտավներից մեկը կոչվում է «Անավարտ ճակատագիր», թեման Հայոց ցեղասպանությունն է: Այսօր մեր այդ ողբերգությունը մոռացնելու, ստվերելու միտում է նկատվում մեր իշխանությունների կողմից: Արդյո՞ք արժանապատիվ կեցվածք է պատմական արդարությունից հրաժարվելը:

- Այն, ինչ կատարվել է, մոռանալ չի կարելի, դա մեր հոգու մեջ է, դա ո՛չ ասելով է, ո՛չ պատմելով է, ո՛չ էլ հրամայելով է: Դա պատմություն է, որ մենք պետք է միշտ հիշենք, ցավենք, եւ մեր այդ հիշողությունը պետք է շարունակվի մեր ժառանգների մեջ: Այդ կտավը նկարել եմ մի 20 տարի առաջ, տարբեր ցուցահանդեսներում ցուցադրվել է, եւ ես մեծ ցավով եմ դա ստեղծել:

- Ի դեպ, Ձեր մատին կրում եք Մասիսի պատկերով մատանի: Ասում են՝ Արարատը մեր լեռը չէ, ի՞նչ եք կարծում՝ չէ՞:

- Արարատը կարող է լինել Ռուսաստանի տարածքում, Պարսկաստանի տարածքում, Թուրքիայի տարածքում, բայց Արարատը Հայաստանն է, մեր հոգին է, մեր ինքնությունն է, իմաստն է, մեր խորհրդանիշն է, եւ չես կարող հանել իմ միջից, իմ երեխայի միջից: Մինչեւ անգամ Ամերիկայում ապրող հայ երեխան Արարատով է երդվում: Եկեք մենք այդպես եւ այդքան չմանրանանք: Ով ուզում է, թող այդպես խոսի, Թուրքիայի նախագահը կլինի, թե Ռուսաստանի, բայց մենք ստեղծվել ենք այս տարածքի վրա, Աստված Արարատը մեզ է տվել: Հիմա դու ուժեղ ես, կռվեցիր, հաղթեցիր, Արարատը տարար քո սահմանից ներս, բաց հո քո լեռը չի՞:

- Ի՞նչ եք կարծում, խաղաղությունն այսպե՞ս է լինում, երբ Ադրբեջանը շարունակ պահանջներ է ներկայացնում եւ սպառնալիքներ հնչեցնում:

- Պապս, որ Բաքվի գիմնազիայում է սովորել, 1920թ. փախել եկել է Հայաստան: Ասում էր՝ թուրքի հետ կարող ես ընկերություն անել, բայց ճիպոտը միշտ ձեռքումդ պետք է լինի: Հիմա, երբ խոսում են Թուրքիայի մասին, Ադրբեջանի մասին, իմ ծիծաղը գալիս է: Այդ ժողովուրդներն ուզում են մեզ վերացնել, ինչպես Արցախը վերացրին, որտեղ հայ չկա: Այդպիսի բան իմ ուղեղի մեջ չի տեղավորվում, չի կարող խաղաղություն լինել: Կռիվ առայժմ կարող է չլինել, բայց նրանց նպատակը մեզ բնաջնջելն է: Խաղաղությունն այդպես չի լինում, երբ Արցախն են հայաթափել, երբ սպառնում են, թե Հայաստանն «Արեւմտյան Ադրբեջան» է, եւ իրենք վերադառնալու են իրենց «պատմական հայրենիք»:

Խաղաղությունը բարեկամության մեջ է, սիրո մեջ է, հարգանքի մեջ է: Ինչ է, խաղաղությունը կրակելո՞ւ մեջ է: Մենք մեզ թույլ ու խեղճ ենք պահում, իսկ թույլը միշտ էլ մեղավոր է: Մենք չենք պատասխանում նրանց որեւէ ասածին: Նրանք պետք է իմանան, որ դու ուժ ունես, ատամ ունես: Երբ տեսավ, որ դու դրանից զուրկ ես, ինքը միշտ հարձակվելու է քեզ վրա: Իսկ այսօր այդ վիճակն է, եւ շատ ցավալի է:

Ես ուզում եմ մեր ժողովրդին ասել՝ մի քիչ խոհեմ եղեք, մի քիչ մտածեք, ազգ եղեք, պաշտպանեք մեր երկիրը, դա է մեզ պետք, մենք պիտի փրկվենք: Մենք հիմա այնպիսի իրավիճակում ենք, որ չենք կարողանում մեր տեղը գտնել: Չենք գտնում: Երկու հազար տարի առաջ էլ չենք գտել: Եթե գտնեինք, այս տարածքն այսօր կլիներ ուժեղ պետություն: Ո՛չ բարեկամ ունեցանք, ո՛չ ընկեր: Մենք պետք է խելացի լինենք: Ճիշտ է, մեր ժողովրդի մի մասը կրթված է, բայց իմաստնություն չկա, դատարկություն է: Իսկ տաղանդներ, ուժեղներ մենք աշխարհին ենք տվել, Հայաստանին չենք տվել: Նրանք ուրիշների համար են աշխատել, իրենց շահի համար, իսկ Հայաստանի համար չեն աշխատել: Նախորդ դարում մի 50 տարի աշխատեցին Հայաստանի համար, գիտեք, թե ինչեր ստեղծեցին՝ ե՛ւ ատոմակայան, ե՛ւ մետրո... Իսկ ի՞նչ ենք ստեղծել այս վերջին տարիներին: Խելացի չենք, ե՛ւ քաղաքի, ե՛ւ գյուղի մարդկանց հետ եմ շփվել, «որտեղ հաց՝ այնտեղ էլ կաց» եմ տեսել միայն: Չեմ կարողանում հասկանալ, եւ դա ինձ համար մեծ ցավ է: Ես ստեղծագործում եմ, եւ դա է լավը, կարողանում եմ այդ ստեղծագործելով ինձ չսպանել: Սա է փրկում:

Հուսիկ Արա

ԱՍՏՎԱԾ ԻՆՔՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԵՐ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Կառավարության նիստի ընթացքում լսվում է տիեզերանավի հռնդյուն: Քիչ անց, չգիտեմ ինչու, նախարարի հետ ներս է մտնում սպիտակ մորուքով նույն ինքը՝ Աստվածը: Մի պահ զննում է ներկաներին, մոտենում վարչապետին, բռնում ձեռքից, պոկում է գահից ու նստում նրա տեղը: Բոլորը քարանում են:

Վարչապետ - Տեր Աստված, եկել ես ոտս՝ հաշիվ տալու: Հրամայիր՝ սազանդար կանչենք, թող ողջ գիշեր զուռնեն փչի, հարբած լինենք մինչեւ էգուց...

Աստված (կտրուկ) - Ինձ հաղորդեցին՝ դու պատերազմ ես հայտարարել քո Տիրոջը: Եկա վերահաստատելու՝ ավարտվել ես: Ժողովրդի համբերությունը սպառված է:

Վարչապետ (քմծիծաղով) - Ո՞վ է ժողովուրդը: Նմ է մեզ համար, թե՞ մենք՝ նրա: Ժողովրդի երջանկությունն աղի պես բան է, չափն անցավ՝ դժբախտ է: Կարգ է՝ ժողովուրդն աշխատում է, իշխողը՝ վայելում: Դու ես այդ կարգը սահմանել:

Աստված - Ես նման կարգ չեմ սահմանել: Դու ուղղակի չարագործ ես:

Վարչապետ - Չար աշխարհում բարի չեն լինում: Երբ ես եկա, արդարություն չկար: Հիմա ես աթոռին եմ: Դա քո գործնական օգնության շնորհիվ եղավ:

Աստված - Ես ոչ մեկին իշխանության չեմ բերում: Ընտրողներն իրենք են սխալվել:

Վարչապետ - Կարծում ես՝ հիմա ուղղվե՞լ են: Ժողովուրդը միշտ նույնն է՝ տապալում է մեկին, ընտրում ավելի վատին: Նրանց արդարություն պետք չէ՝ խոստումներ են պետք: Մեծ դոզաներով եմ տվել: Էլի տալիս եմ: Ով էլ գա՝ իմ պես է կառավարելու:

Աստված - Բայց ես բոլորին բանականություն ու ազատ ընտրության հնարավորություն եմ շնորհել:

Վարչապետ - Շնորհել ես՝ օգտվում են իմ նմանները: Ես պարզապես ավելի ազատ եմ խոստումներ տալիս (ցույց է տալիս նախարարներին): Էս մի բուռ բոռաճանճերին խելքս բաժանեմ, էլի ամենախելացին կմնամ: Դրա համար էլ ես եմ վարչապետը:

Աստված - Բայց մարդիկ այլեւս չեն հավատում ո՛չ քեզ, ո՛չ քո բոռաճանճերին:

Վարչապետ - Կհավատան նոր խոստումներիս: Պատերազմի վախին: Էնպես որ՝ հինը կկործանես, նույնը կստանաս: Կառավարողը քաոսը չի ուղղում, նա հենց քաոսն է կառավարում ու քաոից օգտվում:

Աստված - Քեզնից ահավորը, անարդարը աշխարհում չկա:

Վարչապետ - Կա: Աշխարհը ցավով է շաղախված, ո՛չ արդարությամբ: Եթե արդարություն էիր ուզում, արդար աշխարհ ստեղծեիր, ես էլ արդար կդատեի:

Աստված - Լավը չի շեղվում արդարությանից, վատը մեղքի մեջ է ընկնում:

Վարչապետ - Քո ստեղծած սատանան էլ մեղքեր է գործում: Ինչո՞ւ չես պատժում: Վերեւում դու քո ձեւով ես կառավարում, ներքեւում՝ մենք՝ մեր ձեւով: Բարիով ո՛չ պետություն կպահես, ո՛չ աշխարհ: Չարը հավասարակշռում է: Մենք հավասարակշռում ենք:

Աստված - Քո երկրում ազատության հետք չկա:

Ոչ մի բանի նախարար - Կա՛: Բոլորը ազատ են՝ կարող են խոսել, կարող են լռել: Մենք ի՞նչ մեղք ունենք՝ ոմանք պարզապես խելացի են՝ լռում են:

Աստված - Մարդկանց բռնաճնշումների եք ենթարկում: Հոգնել են տառապանքներից:

Ամեն ինչի նախարար - Հիմա ավելի քաղաքակիրթ ենք դատում: Կշտացած ժողովուրդը վտանգավոր է: Սովը կարգուկանոն է հաստատում: Վախը սեր է ծնում: Մեր վարչապետն է հոգնում, ոչ թե՝ ժողովուրդը:

Աստված - Ձեր վարչապետը խաբել, մոլորեցրել է հավատավոր ժողովրդին:

Վարչապետ - Մեկին խաբելը մեղք է: Ժողովրդին խաբելը՝ արվեստ: Բոլորն ինչ-որ բան են ուզում՝ հաց, հարստություն, պատերազմ: Ես տալիս եմ խոստում:

Աստված - Դրա համար են մարդիկ երկրից հեռանում:

Վարչապետ (կատաղած) - Կուզես մնան՝ ինձ տապալե՛ն: Երջանիկ ժողովուրդն ապագա չունի:

Աստված - Բայց դու ասում էիր՝ կա ապագա:

Վարչապետ - Հույս եմ տվել ու էլի տալիս եմ: Դա ամենաազդեցիկ ապրանքն է (լռություն):

Աստված - Վճռված է՝ պետք է հեռանաս:

Վարչապետ (սառը, հաստատուն) - Չեմ հեռանա: Քանի մարդիկ անկատար են՝ իմ նմանները հավերժ են: Դու չես կարողացել կարգավորել մաքուր, երկնագույն տիեզերքը, ես կառավարում եմ փչացած աշխարհը: Դու էլ իջիր գահիցդ: Մենք տիեզերքն էլ կարգի կբերենք: Այսուհետ դու ինձ համար Աստված չես: (դահլիճում սարսուռ):

Աստված (դանդաղ) - Հեռանում եմ: Այնուամենայնիվ, որոշված է՝ այս ընտրություններին կհեռանաս (Աստված շրջվում է ու դուրս գալիս):

Ոչ մի բանի նախարար (շշուկով) - Էս... ո՞ր տիրադավ սրբազանն էր... Աստծո դերով..

Ամեն ինչի նախարար (կտրուկ) - Լռի՛ր: Կարեւորը՝ ստացվեց:

Չգիտեմ ինչի նախարար - Ժողովուրդը տեսավ՝ մեր կայծակնացայտ վարչապետն Աստծուց չի վախենում:

Վարչապետ (նստում է գահին, ուղղում թագը, խոսում նախարարներին լսելի) - Ի վերջո, Աստվածը նա է, ով աթոռին է... (նախարարների բուռն ծափահարությունները)

Ժողովուրդն էկրանների առաջ՝ հմայված վայելում էր դարի «աստվածամարտը»:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 11.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՐՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԱԿԱՆ ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԴԱԴԱՐԸ

Մի հացյալ Նահանգների եւ Իրանի միջեւ կնքված երկշաբաթյա հրադադարն աշխարհը, ըստ էության, ընդունեց շատ մեծ զգուշավորությամբ: Թեեւ հասկանալի է, որ ճգնաժամը հնարավոր եղավ վտանգավոր սահմանագծից հետո տանել, սակայն ամեն բան դեռ շատ փխրուն է, ու անելիք շատ կա: Թեհրան-Վաշինգտոն երկխոսության կազմակերպման հարցում այս անգամ առանցքային դերակատարում ունեցավ Պակիստանը: Այդ երկրի վարչապետ Շահբազ Շարիֆին է պատկանում ժամանակավոր հրադադար հաստատելու նախաձեռնության հեղինակային իրավունքը: Պակիստանի այս նախաձեռնությանն ակտիվորեն աջակցեցին Օմանը, Թուրքիան, Չինաստանը: Որոշ մասնակցություն, ըստ էության, ունեցել են նաեւ Սաուդյան Արաբիան, Եգիպտոսն ու Քաթարը: ՄԱԿ գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշն առաջիններից էր, որ ողջունեց կնքված հրադադարը եւ հորդորեց խստորեն պահպանել այն: Թուրքիան ժամանակավոր հրադադարի հաստատմանն արձագանքեց զգուշավոր լավատեսությամբ, սակայն Անկարայից այս առնչությամբ տարածվող հայտարարություններում շեշտվում է, որ անհրաժեշտ է ցուցաբերել կարգապահություն եւ պահպանել հրադադարը խստիվ կերպով, որպեսզի սադրիչների համար սադրանքներ անելու հնարավորություն չլինի: Անկարան այս դեպքում առանց երկիմաստության նկատի ունի Իսրայելին: Պակիստանը, որպես նախաձեռնության հեղինակ, պատրաստվում է իր նախաձեռնության հիմքի վրա ավելի լուրջ բանակցային գործընթացի եւ հնարավոր կայուն ու ամուր, տեւական խաղաղության գործընթացի հյուրընկալմանը: Հասկանում են, որ կա հնարավորություն՝ հակամարտությունն անցյալում թողնելու, եթե լինի անհրաժեշտ կամք: Սաուդյան Արաբիան ողջունեց կայացած հրադադարը եւ հույս հայտնեց, որ այն դուռ կբացի համապարփակ կարգավորման եւ ռեգիոնալ անվտանգության ամրապնդման համար: Էմիրություններում էլ կենտրոնացան այն բանի վրա, որ հաղթեցին այս հակամարտությունում, քանի որ կարողացան խուսափել պատերազմից եւ հետայսու հենվելու են սեփական ազգային պաշտպանական կարողությունների վրա: Թե՛ Էր-Ռիյադում եւ թե՛ Աբու-Դաբիում այս էսկալացիայից հետո ավելացել է հակակրանքը Թեհրանի հանդեպ: Հատկապես որ Թեհրանը ձգտում է միանձնյա վերահսկողություն սահմանել Հորմուզի նեղուցի հանդեպ: Չինաստանն առաջիններից մեկն է, որ ողջունել է մարտական գործողությունների ժամանակավոր դադարը: Պեկինից նաեւ հայտարարել էին, որ հետեւողականորեն հանդես են գալիս պատերազմի դադարեցման օգտին եւ շարունակելու են կառուցողական դերակատարում ունենալ Մերձավոր Արեւելքում խաղաղության եւ կայունության ապահովման գործում: Պեկինից նաեւ հարկ համարեցին հայտարարել, որ կարեւորում են Հորմուզի նեղուցի անվտանգությունն ու ազատ նավագնացության իրականացումը: Պեկինի համար դա ոչ միայն դիվանագիտություն է, այլ նաեւ՝ տնտեսական շահ: Չինական կողմի համար սկզբունքային հարց է, որ նավթի մատակարարումները լինեն անխափան, իսկ նավագնացությունն էլ՝ անվտանգ ու ապահով: Ճապոնիան հրադադարը համարեց դրական քայլ՝ վերջնական խաղաղության համաձայնագրի կնքման գործում: Ինդոնեզիան կոչ արեց հարգել ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, Մալայզիան հայտարարեց, որ կարեւոր հանգրվանի են հասել կողմերը՝ խաղաղության եւ կայունության վերականգնման գործընթացում: Ավստրալիան ու Նոր Զելանդիան եւս ողջունեցին հրադադարի հաստատումը՝ կապելով այն էներգետիկ ճգնաժամից խուսափելու հետ: Էսկալացիայի ներկայիս դադարը իրենց հայտարարություններով ու դիվանագիտական-քաղաքական ժեստերով ողջունեցին եւ կարգավորման հույս հայտնեցին նաեւ Հայաստանը, Ադրբեջանը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, եվրոպական մյուս երկրները: Նույնիսկ Իսրայելը, թեեւ սրտի կսկիծով, սակայն ամերիկյան ճնշման ներքո, թերեւս, ստիպված եղավ աջակցել հրադադարի հաստատման ամերիկյան որոշմանը: Սակայն կարեւոր է այն, որ բոլորի մոտ էլ նկատվում է զգուշավորություն, անկախ լավատեսականության չափաբաժնից:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am